ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Լրամշակված տարբերակ)

Պատվիրատու՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ տնօրեն Ա. Մեղոյան

Կատարող՝

«Թրիգգեր» ՍՊԸ տնօրեն Ա. Պեպանյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
1. ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 8
1.1 Գոտևորման նախագծի կազմը և բովանդակությունը 8
1.2 Գոտիավորման նախագծի մշակման հիմքերը և ելակետային նյութերը 9
1.3. Երևան քաղաքի Նուբարաշեն համայնքի գոտիավորման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը 10
1.4 Պատմական ակնարկ 12
1.5 Նուբարաշեն համայնքի տնտեսության ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները 15
1.6 Նուբարաշեն վարչական շրջանի պատմամշակութային անշարժ հուշարձանների և դրանց պահպանական գոտիների տարածքները 17
1.7 Հիմնախնդիրները և գերակայությունները 26
1.8 Նուբարաշեն վարչական շրջանի 2022 թվականների զարգացման ծրագիր 31
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. 34
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 34
2.2 Լանդշաֆտը 35
2.3 Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմաններ 35
2.4 Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը 39
2.5. Օդերևութաբանակլիմայական պայմանները 43
2.5.1 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը 48
2.6 Մթնոլորտային օդը 49
2.7 Աղմուկի մակարդակը 56
2.7.1 Էլեկտրամագնիսական ճառագայթներ 57
2.8 Հողերի բնութագիրը 58
2.8.1. Հողօգտագործման արդի վիճակը 59
2.9 Մակերևութային և ստորերկրյա ջրահոսքեր 66
2.10 Բուսական և կենդանական աշխարհի նկարագրություն 70

2.11 Պահպանվող տարածքներ 71

2.12 Թափոնների կառավարում 72

2.12.1. Գերեզմանատներ 74

2.12.2. Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց 74

2.13 Կանաչապատման համակարգը 79

2.14 Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր 80

3. ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 84

3.1 Ջրամատակարարում 84

3.2 Ջրահեռացման ցանց 85

3.3 Անձրևաջրերի հեռացման ցանց 86

3.4 Ոռոգման ցանց 87

3.5 Էլեկտրամատակարարում 87

3.6 Հեռախոսակապ 89

3.7 Գազամատակարարում 89

4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 94
ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 94

5. ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄԸ 96

5.1. Տարածքի գոտիավորումը 96

5.2 Բնաէկոլոգիական և սանիտարահիգիենիկ սահմանափակումների համակարգը 115

5.3. Լանդշաֆտի պահպանման գոտիները 117

6. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՑ 119

6.1 Մակերեսային հակաջրողողումային միջոցառումներ 120

6.2 Հականստվածքային միջոցառումներ 120

6.3 Խախտված հողերի վերականգնում 121

6.4 Հակասելավային, հակադեֆլյուկցիոն, հակաջրհեղեղային կառուցվածքներ և միջոցառումներ 121

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 123

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 126

8.1. Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը 126

8.2 Նուբարաշեն համայնքի մթնոլորտի օդի աղտոտվածության գնահատումը 127

8.3 Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը 129

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ 131

9.1 Մթնոլորտային օդը 133

9.2 Աղմուկի մակարդակը 135

9.3 Հողերի բնութագիրը 137

9.4 Մակերևույթային ջրեր. 138

9.5 Թափոնների կառավարում 139

9.6 Կանաչապատման համակարգը 141

2.10 Բուսական և կենդանական աշխարհի պահպանություն 148

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 150

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 151

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Երևանը իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: Երևանն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք: Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ զարգացումը: Երևանի վարչական սահմանները սահմանված են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով: Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին, Երևանի քաղաքապետը: Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները գործում են իրենց նստավայրում՝ Արգիշտիի փողոց 1 հասցեում: Ավագանու որոշմամբ ավագանին իր գործունեությունը (ներառյալ՝ նիստերի անցկացումը) կարող է կազմակերպել այլ վայրում: Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների: Երևանի տարածքը կազմում է 223քկմ Երևան քաղաքի բնակչության թիվը (մշտական)՝ 2021թ. Հունվարի 1-ի դրությամբ 1091.7 հազար մարդ Սեռատարիքային կազմը՝ տղամարդիկ 504770 և կանայք՝ 586977, մասնավորապես. 0-14 տարեկան՝ 21% 15-24 տարեկան՝ 10.2% 25-64 տարեկան՝ 52.8% 65-80 և ավելի տարեկան՝ 16% Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա: Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ: Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան,

Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Քաղաքի հետագա զարգացման տեսլականից ելնելով՝ քաղաքին անհրաժեշտ է Նուբարաշեն համայնքի մանրամասն գոտևորման նախագիծ՝ քաղաքաշինական հստակ սահմանված չափորոշիչներով, ոճային առանձնահատուկ ուղղություններով, կոմունալ ենթակառուցվածքների հետագա բարեփոխման կարիքների նկատառումներով և այլն, ինչը կնպաստի համայնքի քաղաքաշինական կանոնակարգված զարգացմանը:

Նկար 1. Երևան քաղաքի վարչական շրջանների սահմանները:

Նախագծի նպատակն է մշակել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագիծը (այսուհետև՝ գոտևորման նախագիծ), որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Գոտևորման նախագիծը հանդիսանում է իրական քաղաքաշինական ձևափոխումների մակարդակ, որտեղ մի կողմից իրականացվում են քաղաքի

գլխավոր հատակագծում նախատեսված շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հիմնական դրույթները, մյուս կողմից ձևավորվում է կոնկրետ քաղաքաշինական իրադրություն լոկալ էկոլոգիական, բնական բնութագրերով և սանիտարահիգիենիկ պայմաններով:

Բնակելի շրջանի գոտևորման նախագծի շրջանակներում «Շրջակա միջավայրի պահպանումը բաժնի մշակման նպատակը հանդիսանամ է շրջակա միջավայրի պահպանության հարցերի գերակայության ապահովումը, բնօգտագործման արդյունավետությունը, բնակչության կենսագործունեության էկոլոգիական անվտանգ միջավայրի ձևավորումը և առողջության պաշտպանումը:

Երևան քաղաքի շրջակա միջավայրի առկա վիճակը և բարելավման հիմնական ուղղությունները դիտարկվել են քաղաքի գլխավոր հատակագծում: Գլխավոր հատակագծում շրջակա միջավայրի պահպանության համաքաղաքային լուծումները վերաբերվում են որոշ չափով նաև Նուբարաշեն համայնքին:

Գոտևորման նախագծում շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակը և բարելավման միջոցառումները դիտարկվում են Երևան քաղաքի ամբողջական համակարգում:

Նուբարաշեն վարչական շրջանի զարգացման միտումները բխում են մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնադրույթներից և ներկայացված են վարչական շրջանում առկա հիմնախնդիրները:

1. ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1.1 Գոտևորման նախագծի կազմը և բովանդակությունը

Աղյուսակ 1.1.1

	I. ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ
1	**Ընդհանուր դրույթներ**
1)	նախագծի մշակման հիմքերն ու ելակետային նյութերը
2)	քաղաքաշինական այլ ծրագրային փաստաթղթերի և հողօգտագործման սխեմաների հետ փոխադարձ կապը
3)	տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները
2	**Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները**
1)	գոտիների թվարկումն ըստ թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների),
2)	գոտիների օգտագործման պայմանները,
3)	քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային (հաշվի առնել Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության հիմնավորման նախագծում սահմանված պայմանակարգերը), գյուղատնտեսական սահմանափակումները (այդ թվում՝ սերվիտուտները):
3	**Կառուցապատման չափորոշիչները**
	առանձին գոտիների կառուցապատման չափորոշիչները՝ հարկայնությունը, կառուցապատման տոկոսը և խտությունը, կանաչապատ, ոչ կանաչապատ մակերևույթների համամասնությունները և այլն: Յուրաքանչյուր գոտի ներկայացվում է առանձին տարբերությամբ, որտեղ ներկայացվում է գոտում թույլատրելի օգտագործման (կառուցապատման) մանրամասն ցուցակը՝ համապատասխան բնութագրերով:
4	**Կառուցապատման կանոնները**
	Սահմանվում են տեղական պայմաններից ելնելով, որոնք պարտադիր են բոլոր գոտիների համար: Դրանք ներկայացվում են առանձին հոդվածներով և կարգավորվում են կառուցապատման և շահագործման հետ կապված հետևյալ խնդիրները՝
1)	գոտևորման ընդունված սկզբունքներին չհամապատասխանող շենքերի և շինությունների աստիճանական վերափոխման միջոցառումների իրականացման մեխանիզմները,
2)	աղմուկից, շրջակա միջավայրի աղտոտումից, վիբրացիայից, արտացոլումներից պաշտպանության միջոցառումները,
3)	տարածքներին, շենքերին, շինություններին, փողոցների ձևավորմանը, գովազդին, ցուցանակներին և այլ նշաններին ներկայացվող պահանջները,
4)	այլ, այդ թվում՝ տեղական առանձնահատկություններից բխող պայմաններ,
5)	քաղաքաշինական գործունեության իրականացման կանոնների սահմանումը:
5	**Հուշարձանների պահպանական գոտիների պայմանակարգերի տվյալները**

1.2 Գոտիավորման նախագծի մշակման հիմքերը և ելակետային նյութերը

Գոտիավորման նախագծի պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան:

- Աշխատանքների գնման ՈԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/103 առ 30.11.2021թ. պայմանագիր:
- Երևան քաղաքի ավագանու 2020թ. հունիսի 24-ի N244-Ա որոշմամբ հաստատված Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանք:
- Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N184-Ա որոշում:
- Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի Երևանի զարգացման 2020 թվականի ծրագիրը հաստատելու մասին N185-Ա որոշում:
- Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշում:
- Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N496-Ա որոշում:
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք:
- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:
- ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N385-Ն որոշում:
- ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր:
- ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1920-Ն որոշում (ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 597-Ն որոշման փոփոխություններով):

1.3. Երևան քաղաքի Նուբարաշեն համայնքի գոտիավորման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը

Նախնական գնահատման հայտը մշակված է հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023թ. ծրագիրը հաստատելու մասին» N45-Ա և 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N47-Ն որոշումները, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածի 24-րդ մասը, « Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 14-ի N23 դրական եզրակացությունը:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),

- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.,
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության <<ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության <<ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում,
- <<ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում,

- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև՝
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.4 Պատմական ակնարկ

Տարածքը՝ 1724 հա:

Բնակչությունը՝ 9900 մարդ:

Ընդհանուր սահմաններ ունի էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով սահմանակից է Արարատի մարզին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) դարձավ միակ Սփյուռքի կազմակերպությունը, որին թույլատրվեց գործունեություն ծավալել Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում (ՀԽՍՀ): ՀԲԸՄ թույլտվությունը տրվել է 1923 թվականին:

1926 թվականի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Միացյալ Նահանգների Ֆիլադելֆիայի հանդիպման ժամանակ, ՀԲԸՄ-ն որոշում է կայացրել ֆինանսավորել Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական

Հանրապետությունում նոր բնակելի շենք կառուցելու համար՝ հիմնադիրի պատվին: Ծրագրի հիմնական նպատակն ուղղված էր Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ ընտանիքների հայրենադարձությանը և այն տարածվեց Մերձավոր Արևելքում և Եվրոպայում:

	
Նկար 1.4.1 Նուբարաշենի հատակագիծն ըստ Ալ. Թամանյանի:	**Նկար 1.4.2 Նուբարաշենի հատակագիծը, 1926-27թթ.:**

Ծրագրի իրականացման համար նախատեսված էր մինչև 1931 թվականի ապրիլի 30-ը հավաքել 250.000 ԱՄՆ դոլար, որպեսզի ծրագիրը սկսի ՀԲԸՄ-ի 25-ամյակի կապակցությամբ: Նյու Յորքում նվիրաբերվել է 102.000 ԱՄՆ դոլար, իսկ Չիկագոյում 25.000 ԱՄՆ դոլար: 1929 թվականի վերջի դրությամբ ապահովվեց միայն 153.000 ԱՄՆ դոլար:

Հայաստանի կառավարությունը նախաձեռնության համար առաջարկել է բազմաթիվ տեղեր, այդ թվում՝ Եղվարդ, Սարդարապատ և Մեծամոր: Վերջապես, բնակավայրի գտնվելու վայրը ընտրվել է մայրաքաղաքի հարավ-արևելյան հարթավայրում, Նորագավիթից հարավ:

Պողոս Նուբարը ծրագրի համար նվիրաբերեց 100.000 ԱՄՆ դոլար, իսկ վերջապես, 1930 թվականի ապրիլ-մայիսին Հայաստանի կառավարության և ՀԲԸՄ-

ի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել «Նուբարաշեն բնակելի թաղամասի կառուցելու համար: Նույն տարվանից սկսվեց շինարարական աշխատանքը Երևանի հարավում՝ քաղաքաշինական ծրագրի հիման վրա, որը մշակվել է 1926-27թթ. ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կողմից:

Նուբարաշենի հատակագծում միահյուսված են փողոցների ճառագայթա-օղակաձև և ուղղանկյուն հատակագծման սկզբունքները: Ավանի կենտրոնով արևելքից արևմուտք ձգվում է զբոսայգին, որի միջով հոսում է ջրանցքը: Այս կանաչ զանգվածն ավանը բաժանում է հյուսիսային և հարավային մասերի, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձին հորինվածքային լուծում:

1931թ. հուլիսին մոտ 100-120 բնակելի շենքեր պատրաստ էին ծառայելու: 1932 թվականին բնակավայրը պաշտոնապես հաստատվել է և անվանվել Նուբարաշեն (նշանակում է Նուբար քաղաք): Նորաստեղծ բնակավայրի առաջին բնակիչները հայրենադարձվել են Հունաստանի հայ ընտանիքները, այնուհետև՝ Բուլղարիայից, Ֆրանսիայից, Լիբանանից և Սիրիայից: Ծրագրի գրեթե 50%-ը ավարտվել է 1936թ. վերջին: 1937թ. ամռանը Նուբարաշենում ապրում էր մոտ 1000 հայրենադարձված հայ:

1938 թվականին բնակավայրը վերանվանվեց Սովետաշեն (Սովետասեն), որը նշանակում է խորհրդային քաղաքը: 1961թ. Օրջոնիկիձեի շրջանը ձևավորվեց որպես Երևանի վարչական շրջան: 1963թ. Սովետաշենին տրվել է քաղաքային տիպի բնակության կարգավիճակ՝ Օրջոնիկիձեի շրջանի մի մասը դառնալու համար: 1989թ. թաղամասը վերանվանվել է իր սկզբնական անվամբ: 1996թ. Հայաստանի վարչական բաժանման բարեփոխումների արդյունքում Նուբարաշենին տրվեց Երևանի վարչական շրջանի կարգավիճակ: 1958 թվականին բացված Նուբարաշենի գործարանը հանդիսանում է թաղամասի առաջին արդյունաբերական գործարաններից մեկը: 1982 թվականին բացվեց Նուբարաշենի կահույքի գործարանը:

Թաղամասի կենտրոնում գտնվում է Նուբարաշենի կենտրոնական այգին և հարակից Ղևոնդ Ալիշանի անվան N95 դպրոցը (բացվել է 1932 թվականին):

Խորհրդային տարիներից ի վեր թաղամասում գործում են անասնաբուծարաններ, որոնցից ամենամեծը՝ 1971 թվականին բացված թռչնաբուծական ֆերման է:

Նուբարաշենի հոգեբուժական բժշկական կենտրոնն ունի 500 մահճակալ:

1.5 Նուբարաշեն համայնքի տնտեսության ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները

Նուբարաշեն վարչական շրջանը արտաքին սահմաններով հարում է Արարատի մարզին և սահմանակից է Շենգավիթ ու Էրեբունի վարչական շրջաններին: Տարածքը կազմում է 1724 հա, բնակչությունը՝ 9.9 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 7.7% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 0.9%:

Վարչական շրջանում հաշվառված է 1512 սեփական տնտեսություն, 35 բազմաբնակարան շենք, գործում է 6 վերելակ, հարթ տանիքները 7-ն են, թեք տանիքները 27, ընդհանուր մուտքերի քանակը 112 է:

Փողոցների և ճանապարհների երկարությունը 22.934 կմ է, ոռոգման ցանցի երկարությունը 6.4 կմ: Վարչական շրջանի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները կազմում են 2.7 հա, փողոցների սիզամարգերը՝ 0.0186 հա, պուրակները՝ 0.16 հա, 4 զբոսայգի, առկա է 1549 ծառ: Վարչական շրջանի տարածքում եզրաքարերի ընդհանուր երկարությունը կազմում է 3890 գծմ, որից վերանորոգված են 800գծմ, 2125գծմ եզրաքարեր ենթակա են վերանորոգման:

Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կառուցված են 43 թեքահարթակներ: Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում տեղադրված է 136 աղբաման, 256 նստարան, 63 զրուցարան, 119 մարզական գույք: 18 փողոցներում առկա է արտաքին լուսավորության ցանց, 8 փողոցներում բացակայում է:

Բակային տարածքներում տեղադրված է 22 խաղահրապարակ, 10 կարուսել: Առկա է մինի ֆուտբոլի 3 դաշտ:

Վարչական շրջանի տարածքում գործում է 1 մանկապարտեզ, N125 մանկապարտեզում անհրաժեշտ է իրականացնել մասնակի վերանորոգում, 1

նախակրթարան, 2 հանրակրթական դպրոց, 1 երաժշտական դպրոց, որտեղ ևս կան մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացման կարիք: 1 շախմատի մանկապատանեկան կենտրոն, որը ջեռուցման համակարգ չունի: 1 մարզամշակութային կենտրոն, 1 գրադարան, ընտանիքի և երեխաների աջակցման կենտրոն, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N11 օժանդակ (գիշերօթիկ) դպրոց, «Նուբարաշենի մարզառազմական հատուկ մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ և 2 առողջապահական կազմակերպություն:

Աղյուսակ 1.5.1

Վիճակի նկարագրության		
Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
Բնակչություն	Հազ. մարդ	9.9
Վարչական շրջանի տարածը	հա	1724
Փողոցների երկարություն	կմ	22.934
Փողոցների մակերես	կմ^2	160.538
Երթևեկելի մասի երկարություն	կմ	20.550
Կոմունալ տնտեսություն		
Բազմաբնակարան շենքեր	հատ	35
Վերելակներ	հատ	6
Վթարային շենքեր	հատ	1
Անհատական բնակելի տուն	հատ	1512
Առևտուր և սպասարկում		
Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	67
Բարեգործական ճաշարան	հատ	1
Շուկաներ	հատ	2
Հյուրանոցներ	-	-
Բարեկարգում		
Հանգստի գոտիներ	հատ	4
Բակային խաղահրապարակներ	հատ	22
Վերգետնա /ստորգետնյա/ անցումներ	-	-
Թեքահարթակներ	հատ	43
Կրթություն		
Նախադպրոցական հաստատություններ	հատ	2
Երեխաների թիվ	հատ	270
Աշխատողների թիվ	հատ	49
Հանրակրթական դպրոց	հատ	2
Երեխաների թիվ	հատ	1487
Աշխատուղների թիվ	հատ	140
Գերարվեստական դաստիարակության կենտրոն	-	-

Երաժշտական դպրոց	հատ	1
Մարզադպրոց	հատ	1
Արվեստի դպրոց	-	-
Գրադարան	հատ	1
Բնապահպանություն		
Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	2.7
Առողջապահություն		
Առողջապահական հիմնարկներ	հատ	1
Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	3
Պոլիկլինիկա	հատ	1

1.6 Նուբարաշեն վարչական շրջանի պատմամշակութային անշարժ հուշարձանների և դրանց պահպանական գոտիների տարածքները

Պետական ցուցակ

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակութային անշարժ հուշարձանների/ հաստատված է ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 385-Ն որոշմամբ, հավելված N 1/

Աղյուսակ 1.6.1

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձաբը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8
1			Հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհված նուբարաշենցիներին		զբոսայգում	Տ	1
			Նորահայտ հուշարձան Պողոս Նուբար Փաշայի կիսանդրին		Նուբարաշենի 10-րդ փող.	Տ	2

Նկար 1.6.1 Նուբարաշեն վարչական շրջանի մուտքը

Նուբարաշեն հուշարձանների պահպանման գոտիների մակերեսը

Աղյուսակ 1.6.2

Հատվածի համարը	Պահպանական գոտիների համարը	Պահպանական գոտիների մակերեսը /ք.մ/
1	2	3
43	1	1392.2
43	2	255.7
ԸՆԴԱՄԵՆԸ		1647.9

Թաղամասում առկա են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող այլ հուշարձաններ, որոնք ընդգրկված չեն պետական ցուցակներում, այդ թվում՝

1. Սրբոց Նահատակաց եկեղեցին,
2. Ղևոնդ Ալիշանի կիսանդրին,
3. Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիր,
4. Պողոս Նուբար Նուբարյանի կիսանդրին,
5. Չնքուշցիների հուշարձանը:
6. 2015 թվականի ապրիլի 25-ին բացված Սրբոց Նահատակաց եկեղեցու շինարարությունը սկսվել է 2012 թվականին և ավարտվել 2015 թվականին: Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Արտակ Ղուլյանը, իսկ միջոցները հատկացրել է գործարար Գագիկ Ծառուկյանը:

Երևանի Ղևոնդ Ալիշանի անվան N95 հանրակրթական դպրոց Նուբարաշեն վարչական շրջանում: Հիմնադրվել է 1932 թվականին Պողոս Նուբարի կողմից իր

իսկ հիմնադրած ավանի հայրենադարձների երեխաների համար: Դպրոցը կառուցվել ճարտարապետ Արդվարդ Կանայանի նախագծով:

Սկզբում դպրոցն աշխատել է 2 հերթով, ունեցել է նաև երեկոյան դպրոց՝ աշխատող երիտասարդների համար: 1964 թվականին կառուցվել է 2-րդ մասնաշենքը:

1971 թվականին Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակի առթիվ դպրոցն անվանակոչվել է նրա անունով: 2004 թվականին դպրոցի տնօրինության նախաձեռնությամբ և ԱՄՆ-ում բնակվող դպրոցի նախկին ուսուցչուհի Քնարիկ Թաթարյանի հովանավորությամբ շենքի բակում տեղադրվել է Ղևոնդ Ալիշանի բրոնզաձույլ կիսանդրին:

Նուբարաշենի երաժշտական դպրոցը գործում է 1935 թվականից, իսկ N34 Նուբարաշենի գրադարանը գործում է 1936 թվականից:

Նկար 1.6.2 Ղևոնդ Ալիշանի կիսանդրին, կառուցված 2004թ	**Նկար 1.6.3 Նուբար Փաշայի կիսանդրին**

Նկար 1.6.4 Ղևոնդ Ալիշանի անվան N95 հանրակրթական դպրոց, Նուբարաշեն վարչական շրջան

Նկար 1.6.5 Հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհված նուբարաշենցիներին



Նկար 1.6.6 Նուբարաշեն վարչական շրջանի պատմամշակութայնի հուշարձանների պահպանության գոտիների տեղակայումը

ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՁՈՒՀՎԱԾ ՆՈՒԲԱՐԱՇԵՆՅԻՆԵՐԻ,
1973 թ., 1.10. 1 (Տ)

Հուշարձանի պահպանական գոտիների համակարգի օգտագործման պայմանակագ (ռեժիմ)

Աղյուսակ 1.6.3

հ/հ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլա-տրվում է	Արգել-վում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահա-մարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
Պահպանության գոտում						
1	Հողային	1.1	հետախուզում և հնագիտական պեղում			Անհրաժեշտության դեպքում
		1.2	գյուղատնտեսական (վերգետնյա՝ 30-50 սմ խորությամբ)			
		1.3	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
	Բարեկարգում	1.4	խոտածածկ			
		1.5	թփուտներ			հնագիտական հետազոտությամբ
		1.6	ծառատունկ			
		1.7	հետիոտն անցուղիներ			
		1.8	ճանապարհներ			
	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	1.9	աղբաման, նստարան			
		1.10	ավտոկայանատեղի			
	Տնտեսական	1.11	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		1.12	հուշարձանի բնույթին համապատասխան (տեղեկատվական բացիկներ, քարտեզներ, հուշանվերներ)			

ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ, 2008 թ., 1.10. 2 (Տ)

Հուշարձանի պահպանական գոտիների համակարգի օգտագործման պայմանակագ (ռեժիմ)

Աղյուսակ 1.6.4

հ/հ	Օգտագործման գործունեությունը (աշխատանքի տեսակը)			Թույլա-տրվում է	Արգել-վում է	Ծանոթագրություն
	անվանումը	ենթահա-մարը	բնույթը			
1	2	3	4	5	6	7
Պահպանության գոտում						
1	Հողային	1.1	հետախուզում և հնագիտական պեղում			Անհրաժեշտության դեպքում
		1.2	գյուղատնտեսական (վերգետնյա՝ 30-50 սմ խորությամբ)			
		1.3	ինժեներական ստորգետնյա ուղեգծեր			
	Բարեկարգում	1.4	խոտածածկ			
		1.5	թփուտներ			հնագիտական հետազոտությամբ
		1.6	ծառատունկ			
		1.7	հետիոտն անցուղիներ			
		1.8	ճանապարհներ			
	Ճարտարապետական փոքր ձևեր և վերգետնյա ինժեներական ուղեգծեր	1.9	աղբաման, նստարան			
		1.10	ավտոկայանատեղի			
	Տնտեսական	1.11	ոռոգող գյուղատնտեսական գործունեության կազմակերպում			
		1.12	հուշարձանի բնույթին համապատասխան (տեղեկատվական բացիկներ, քարտեզներ, հուշանվերներ)			



Նկար 1.6.9. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ. Սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների տեղակայման ուրվագիծ

	
Նկար 1.6.10 Լուսաղբյուր հուշարձանը:	Նկար 1.6.11 Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիր



Նկար 1.6.12 Նուբարաշեն վարչական շրջանի պատկերները թռչնի թռիչքի բարձրությունից

Նկար 1.6.13 Սրբոց Նահատակաց եկեղեցին

Նկար 1.6.14 Նուբարաշենի կետրոնական այգի

Նկար 1.6.15 Նուբարաշենի կենտրոնական փողոցը	Նկար 1.6.16 Պողոս Նուբարի անվան զբոսայգի

1.7 Հիմնախնդիրները և գերակայությունները

1. Վարչական շրջանի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածքի գոտիավորման նախագծերի) պատվիրման անհրաժեշտություն,
2. Քաղաքային տրանսպորտի աշխատանքի բարելավման անհրաժեշտություն,
3. Երթուղային տրանսպորտի ավելացման անհրաժեշտություն,
4. Կանգառների արդիականացման անհրաժեշտություն,
5. Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման անհրաժեշտություն,
6. Գոռնտային ճանապարհներ ունեցող թաղամասերի ասֆալտապատման անհրաժեշտություն,
7. Մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն,
8. Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն,
9. Միջբակային տարածքների ասֆալտապատման անհրաժեշտություն,
10. Չլուսավորված թաղամասերում նոր արտաքին լուսավորության ցանցի անցկացման անհրաժեշտություն,
11. Բակային և միջբակային տարածքների արտաքին լուսավորության համակարգի անցկացման անհրաժեշտություն,
12. Չլուսավորվող փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման անհրաժեշտություն,

13. Նոր խաղահրապարակների ստեղծման և կանաչապատման անհրաժեշտություն,
14. Կանաչ տարածքների ընդլայնման անհրաժեշտություն,
15. Բնակելի կառուցապատման համար ենթակա համայնքային հողամասերի վրայից անցնող բարձրավոլտ մալուխների ապամոնտաժման անհրաժեշտություն,
16. Տնամերձ հողամասերի վրա գտնվող բարձրավոլտ հոսանքալարերի հենասյուների տեղափոխման անհրաժեշտություն,
17. Վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն,
18. Նորաստեղծ թաղամասերի գազաֆիկացման անհրաժեշտություն,
19. Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի արդյունավետ և ամբողջական իրականացման անհրաժեշտություն,
20. Վարչական շրջանում գտնվող վթարային շենքերի ամրացման անհրաժեշտություն,
21. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, պատուհանների փոխարինման, ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման անհրաժեշտություն,
22. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հիմնանորոգման և նորերի կառուցման անհրաժեշտություն,
23. Ոռոգման ցանցի վերանորոգման և ընդլայնման անհրաժեշտություն,
24. Նուբարաշենի սկզբնամասում գտնվող կամրջի ամրացման անհրաժեշտություն,
25. Սակավաշարժ խմբերի հասանելիության ապահովման համար համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն,
26. Վարչական շրջանի բնակչության առողջությանը սպառնացող խնդիրների լուծման անհրաժեշտություն /աղբավայր, խոզաբուծական ֆաբրիկայի թափոններ, թունաքիմիկատների գերեզմանոց/,
27. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավման՝ ընթացիկ նորոգման, գույքի թարմացման, բակերի ոռոգման

ցանցերի վերականգման, նորերի կառուցման և կանաչապատման անհրաժեշտություն,

28. Նուբարաշեն վարչական շրջանում նոր շախմատի դպրոցի շենքի կառուցման անհրաժեշտություն,
29. Նուբարաշեն վարչական շրջանի Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցի բարձր վարձավճարների վերանայման անհրաժեշտություն /որի հետևանքով զգալիորեն նվազել է երաժշտական դպրոց հաճախող սաների թիվը/,
30. Մատաղ սերնդի առողջ և ներդաշնակ զարգացման նպատակով հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում ֆիզիկական կուլտուրա առարկայի կարևորության գնահատման, սպորտ դահլիճների հիմնանորոգման ու գույքի հագեցվածության ապահովման անհրաժեշտություն,
31. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար, հնարավորությունների ապահովման անհրաժեշտության,
32. Անբարենպաստ պայմաններում բնակվող խիստ անապահով ընտանիքներին բնակարաններով, կացարաններով ապահովման /սպայական հանրակացարան/ անհրաժեշտություն,
33. Սոցիալապես անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավման անհրաժեշտություն,
34. Սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման անհրաժեշտություն,
35. Համապատասխան աշխատատեղերի ստեղծման, մասնագիտական որակավորում չունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության խնդրի կարգավորման անհրաժեշտություն /ջերմոցային տնտեսությունների, հողագործական կամ այլ աշխատանքների ստեղծում/:

Նուբարաշեն վարչական շրջանի հատակագծատարածական զարգացման հիմնական ցուցանիշները ըստ 2021թ-ի տվյալների

Աղյուսակ 1.7.1

Վարչական շրջան		Ըստ 01.01.2021թ					Մինչև 2020թ. հեռանկարով (ըստ Գլխ.հատակագծի 2005թ.)				
	Տարածք, հա	Բնակ տարածք, հա	Բնակչություն, հազ մարդ	Բնակչ. խտություն, մարդ/հա	Բնակ.ֆոնդ, հազ մ²	Ապահով., մ²/մարդ	Բնակ տարածք, հա	Բնակչություն, հազ մարդ	Բնակչ. խտություն	Բնակ.ֆոնդ, հազ մ²	Ապահով., մ²/մարդ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Նուբարաշեն	1724.0	196. 0	9.9	50.5			286	14.8	52	405	27.4

Նուբարաշեն վարչական շրջանում տեղակայված բազմաբնակարան շենքերի բաշխումն ըստ արտաքին պատերի նյութերի և հարկայնության 01.01.2020թ. դրությամբ

Աղյուսակ 1.7.2

Հ/Հ	Վարչական շրջան	Ընդամենը (միավոր), այդ թվում՝	ըստ արտաքին պատերի նյութերի, (%-ով)				ըստ հարկայնության (միավոր)						
			քարից	Երկաթբետոնից, այդ թվում			1h	2h	3h	4h	5h	6-8h	9h և ավելի
				Ընդամենը	պանել	մոնոլ							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
5.2	Նուբարաշեն	35	85.7	14.3	14.3	0	1	3	1	0	26	0	4



Նկար 1.7.1 Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ: Կառուցապատման վերլուծությունը ըստ հարկայնության

1.8 Նուբարաշեն վարչական շրջանի 2022 թվականների զարգացման ծրագիր

Երևան քաղաքի ավագանու 28.12.2021թ. N496-Ա որոշմամբ հաստատված:

Աղյուսակ 1.8.1

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Նուբարաշեն վարչական շրջանի փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում	Մրցույթում հաղթող կազմակերպություն	4000 քմ բակերի բարեկարգում և ասֆալտապատում, 500 գծմ մայթերի վերանորոգում:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
2	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում		Նուբարաշեն 11-րդ փողոց հ. 14 բազմաբնակարան շենքի բակային տարածքի և 11-րդ փողոցին հարակից ֆուտբոլի դաշտի վերանորոգում:			
3	Նուբարաշեն վարչական շրջանում արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում		Նուբարաշեն «Ա» թաղամասի արտաքին լուսավորության կառուցում:			
4	Նուբարաշեն վարչական շրջանում կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում	«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	Ծաղկապատում և ծառատունկ			

5	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում	Մրցույթում հաղթող կազմակերպություն	Նուբարաշեն 11-րդ փողոց հ. 8-րդ, հ. 13-րդ, հ. 14-րդ և 6-րդ փողոց հ. 150-րդ շենքերում կիրականացվի 4500 քմ թեք տանիքների հիմնանորոգում			
6	Բացօթյա դաշտերի ստեղծում		Սկեյթպարկի կառուցում, վոլեյբոլի դաշտի վերակառուցում			
7	Կապիտալ շինությունների ստեղծում		Հողամասի եզրագծով պարսպապատում, երկհարկանի շինության կառուցում, աշխատանքային պայմանների բարելավում			
8	Եզրաքարերի վերանորոգում		Նախատեսված է 500 գծմ եզրաքարերի վերանորոգում	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի	Երևան համայնքի բյուջե
9	Հենապատերի վերանորագում		Նախատեսված է Նուբարաշեն 6 փողոցի սզբնամասում 27 մ^3 նոր հենապատի կառուղում			
10	Ջրագծի կառուցում		Նախատեսված է 1480 գծմ ջրագծի կառուցում Նուբարաշեն վ/շ Մասիս Ա թաղամաս և 13 փողոց հասցեներում			
11	Նուբարաշեն վարչական շրջանում մշակութային միջոցառումների անցկացում	ՀԿ-ներ, ժողովրդական և ժամանակակից երգի-պարի համույթներ, ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, Արարատյան Հայրապետական Թեմ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում[1] 14 մշակութային միջոցառումներ			

12	Կրթական միջոցառումների կազմակերպում	ՀԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, անհատներ, ժողովրդական երգի-պարի համույթներ, Արարատյան հայրապետական թեմ	Կրթական միջոցառումների կազմակերպում, ծանոթացում արդի գրականության և ժամանակակից գրողների հետ			
13	Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում	ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ,« մարզերի դպրոցներ, ՀԿ- ներ	Օրացույցային պլանով նախատեսված 7 մասսայական միջոցառուների կազմակերպում			
14	Սոցիալական ապահովության ծրագրեր	«Առաքելություն Հայաստան» բարեգործական Հ/Ղ «Սատար» հաշմանդամների հ/կ, անհատ բարերարներ, «Վորլդ Վիժն» ՄԹԿ, «Կարմիր խաչի ընկերություն», Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու Հայաստանի Կրոնական Համայնք», «ԱՔՕԿ» հւպաստանյան iM5, «Ռուռառու» հ/կ նայլն	Հայտնաբերում, կարիքի գնահատում, ուղղորդում, սոցիալապես անապահով ընտանիքներին համապատասխան աջակցության ցուցաբերում, կանխարգելում			

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Հրազդան վտակի ափին: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Ձորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին:

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 Լանդշաֆտը

Համաձայն Երևան քաղաքի հաստատված 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի, Երևանի տարածքը բաժանված է 4 ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների կամ լանդշաֆտային տիպերի.

- չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով,
- կիսաանապատային՝ անապատների տարրերով,
- անապատային՝ կիսաանապատային տարրերով,
- ցածրադիր մարգագետնային:

Նուբարաշենի լանդաշաֆտային պայմանները պատկանում են առաջին տիպին:

Քաղաքի շրջակա բնական միջավայրի հետ քաղաքային կառուցապատման կապի սխեմայի համաձայն Նուբարաշեն վարչական շրջանի կառուցապատման 91%-ը գնահատվում է որպես բարենպաստ: Շրջանի դիրքը բարենպաստ է նաև բնակեցված գոտու բաց տարածքների ուղղվածության աստիճանով, որը կազմում է 75%:

2.3 Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմաններ

Ըստ ձևաբանական առանձնահատկությունների քաղաքի տարածքը բաժանվում է հինգ հիմնական մասերի.

- Ցածրադիր դարավանդավորված հարթություն՝ քաղաքի եզրային հարավային մասը (համապատասխանում է Արարատյան դաշտի երկրորդ աստիճանին):
- Նախալեռնային թույլ թեքության հարթություն՝ քաղաքի կենտրոնական, հարավ-արևմտյան և հարավային մասերը (համապատասխանում է Արարատյան դաշտի երրորդ աստիճանին):
- Հրաբխային սարավանդը (Եղվարդի, Արաբկիրի, Քանաքեռի) և Ավանի գոգավորությունը (քաղաքի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերը):
- Ցածր լեռնային բլուրներ (քաղաքի հարավ-արևելյան մասը):

- Ռելիեֆի բացասական ձևերը (Հրազդան, Գետառ, Ջրվեժ գետերի կիրճերը, ձորակներ և այլն):

Նուբարաշենի տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում ցածր լեռնային բլուրները (քաղաքի հարավ-արևելյան մասը):

Ուսումնասիրվող հատվածը ներկայացված է տարբեր տեսակի ինժեներաերկրաբանական հատկանիշներով օժտված, փուխրից մինչև կիսաժայռային և ժայռային ապարներով: ժայռային գրունտները՝ դոլերիտային բազալտներ, անդեզիտա-բազալտներ և տեղ-տեղ դրանց վրա տեղատդրված կիսաժայռային նստվածքներ՝ տուֆեր, առանձնանում են մեծ ամրությամբ, բայց ունեն տեղադրման տարբեր պայմաններ և դրանց հետ կապված ճեղքավորվածություն:

Գետահովտի լանջերը կազմված են բազալտային և անդեզիտա-բազալտային լավաներից, զառիթափ են:

Հետազոտվող տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները բարդ չեն: ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

ժամանակակից ռելիեֆը մասնակի ժառանգել է հին ռելիեֆի ձևերը:

Հետազոտվող տարածքում պայմանականորեն առանձնացվել են հետևյալ հիմնական գեոմորֆոլոգիական տարրերը.

Ա - Հարթ տարածքներ,

Բ - Բլուրներ,

Գ - Թեք հողմնահարման լանջեր,

Դ - Գետերի հուներ, ողողահուներ, ձորակներ:



Նկար 2.3.1 Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Բնական, բնական-տեխնածին վտանգավոր երևույթների ուրվագիծ



Նկար 2.3.2. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Սպասվող հորիզոնական մաքսիմալ արագացումների և խզումային խախտումների ուրվագիծը

2.4 Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը

Տարածքի երկրաբանական կառուցվածքում, ըստ ծագման, կազմի և հասակի, մասնակցում են տարբեր ապարներ՝ վերին պլիոցենից մինչև անտրոպոգեն.

- Կավ խայտաբղետ, պնդից մինչև ձիգ պլաստիկ թանձրության, խճի, մանրախճի, ճալաքարի և կոպճի պարունակությամբ:
- Ավազակավ շագանակագույն, գորշավուն և մոխրագույն երանգներով, պինդ, կիսապինդ, ձիգ, տեղ-տեղ փափուկ պլաստիկ թանձրության, կավավազի և ավազի ենթաշերտերով և ոսպնյակներով, քարակտորների պարունակությամբ մինչև 35%, մակրոծակոտկեն և խիտ: Տարածումը համատարած է, հզորությունը տատանվում է 0.8-8.0 մետրի սահմաններում:
- Ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային: Կավավազն ունի լայն տարածում, գոյություն ունի տարածքի տարբեր մասերում, հզորությունը տատանվում է 0.5-6.0 մետրի սահմաններում: Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև 35% քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի:
- Ավազ տարահատիկ, ներկայացված է նաև փոշենման տարատեսակով. բաց դեղնավուն, շագանակագույն և մոխրագույն գույնի տարբեր աստիճանի ցեմենտացած և խտացած, կավային գրունտների ոսպնյակներով և ենթաշերտերով: Հզորությունը տատանվում է 2.0-10.0 մետր և ավելի սահմաններում:
- Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով: Քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով: Տարածումը համատարած է, հզորությունը տատանվում է մինչև 1.5 մետրի սամաններում:
- Ճալաքարա-կոպճային գրունտներ գլաքարերով, ավազային և կավաավազային լցանյութով մինչև 35-40%,տարբեր հղկվածության կավային գրունտների

ենթաշերտերով ու ոսպնյակներով: Հզորությունը տատանվում է 1.0-2.0 մետր և ավելի սահմաններում:

- Բազալտ, անդեզիտա-բազալտ, մուգ մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն, խայտաբղետ, խարամացած, անհամաչափ ծակոտկեն, տեղ-տեղ մեծաբեկորային, ջարդոտված, հողմնահարված խճի աստիճանի հրաբխային խարամի և ավազի ենթաշերտերով ու ոսպնյակներով, խոռոչային և զանգվածային: Բացահայտված հզորությունը 15.0-20.0 մետր, Գետառ գետի հովիտներում դրանց հզորությունը գերազանցում է 15 մետր:
- Խարամ, ավազ հրաբխային, խայտաբղետ գույնի (կարմիր, մոխրագույն, վարդագույն և այլն) խճա-մանրախճային և ավազային կազմի, խարամացած, ծակոտկեն խոռոչային բազալտների, անդեզիտա-բազալտների մեծաբեկորներով: Տարածումը սահմանափակ է:
- Տուֆ հրաբխային, որի գույնն է աղյուսակարմրից մինչև սև գույնի, մեծաբեկորային անջատումներով, ծակոտկեն, ճեղքավորված, հողա-փուխր տարատեսակների ենթաշերտերով, հիմքում տուֆային ավազներով: Հզորությունը տատանվում է 1.0-7.0 մետրի սահմաններում:



Նկար 2.4.1. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Տարածքի ճարտարագիտա - երկրաբանական շրջանացման քարտեզ



Նկար 2.4.2. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Շինարարության համար տարածքների պիտանելիության համալիր գնահատման քարտեզ

2.5. Օդերևութաբանակլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ տարածքի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները, սակայն խոնավության առումով ամառներից շատ չեն տարբերվում: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Դիտարկվող տարածքին ամենամոտը տեղադրված է «Էրեբունի» օդերևութաբանական կայանը: Կայանի տվյալները առավելապես բնութագրում են տեղանքի կլիմայական պայմանները և հասանելի են «Շինարարական կլիմատոլոգիա» ՀՀՇՆ II-7.01-2011:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5-12^{0}C: Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –28^{0}C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42^{0}C: Գարնան ամիսներին (մարտ-մայիս) դիտվում են մինչև 150մմ տեղումներ, հունիս-սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64մմ: Տեղումների տարեկան միջինը 291մմ է: Ամռանը օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49%-53%, ձմռանը՝ 73%-76%, գարնանը՝ 57%-61% և աշնանը՝ 51%-70%, օդի հարաբերական խոնվության տարեկան միջինը՝ 61%: Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45%-75%:

Առավել մանրամասն կլիմայական տվյալները բերված են աղյուսակներ 2.5.1-2.5.7-ում:

Աղյուսակ 2.5.1 Օդի ջերմաստիճան

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից. Մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարեկան.°C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Երևան «Էրեբունի»	888	-3.6	-1	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 2.5.2. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութա բանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը,°C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը^		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի	
	Ապահովվածությամբ, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս- օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնն ըստ ուղղությունների, հունիսին, մ/վ
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Երևան «Էրեբունի»	33	34	42	33.3	15.1	45	28	163	51	Հվ	2.4

Աղյուսակ 2.5.3. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը,%														
													Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենա ցուրտ ամսվա %	ամենա շոգ ամսվա, %
Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 2.5.4. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբան ական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական , մմ օրական առավելագույն ըստ ամիսների													Ձնածածկույթ		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Երևան «Էրեբունի»	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47	-
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51			

Աղյուսակ 2.5.5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Անիվներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը,%	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը , մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			(Հս)	(ՀԱՌ)	(Ար)	(ՀՀԱՌ)	(Հվ)	(ՀՎԱՌ)	(Առ)	(ՀԱՌ)					20	50	100
Երևան «Էրեբունի»	888	հունվ.	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1.5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9					
			3.1	3.2	2.8	4	3.1	3	3.8	3.6							
		հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
		հոկտ.	6	18	10	10	21	20	10	5	63	10					
			2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5							

Աղյուսակ 2.5.6. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձ-րություն ծովի մակար դակից. Մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարե կան.°C	Բացար ձակ նվազա գույն. °C	Բացար ձակ առավե լագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Երևան «Էրեբունի»	888	-3.6	-1	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 2.5.7. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի	
	ամենացուրտ օրվա, ապահովվածությամբ, %		ամենացուրտ ենթօրյակի, ապահովվածությամբ, %		ամենացուրտ ժամանակաշրջանի միջին	բացարձակ նվազագույն	ամենա ցուրտ ամսվա միջին օրական սառստանումը	Տողությունը, օր			միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	Տեղումների քանակը նստվածքների ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագությունների հունվարին, մ/վ
								Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C								
	0,98	0,92	0,98	0,92				0	8	10						
Երևան «Էրեբունի»	-22	-20	-19	-18	-3.8	-28	8.3	70	140	159	79	67	128	60	Հվ	2.7
								-5.7	-2.1	-0.8						

2.5.1 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից,
- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 2.5.1.1-ում:

Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Աղյուսակ 2.5.1.1

Կլիմայի գործոնները	Հարմարա-վետությունը	Անհարմարավետությունը	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը ^{0}C	12-14	24-ից բարձր	-30-35 1/5 մ/վրկ քամու դեպքում; -25՝ 2.0 մ/վարկ -15 3.5 մ/վրկ քամու դեպքում
2. Քամու արագությունը մ/վրկ	0,5-3,0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Հարաբերական խոնավությունը	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ հուլիս և օգոստոս ամիսներին Նուբարաշեն համայնքում, որտեղ հաստատվում է 1Т, 2Т և 3Т դասերի «շոգ» եղանակ, առաջանում է անհարմարավետության շրջան առաջացնելով երրորդ աստիճանի ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա: 2-րդ և 3-րդ աստիճանի անհարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը Նուբարաշեն համայնքի համար կազմում է 10-16%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով Նուբարաշեն համայնքի համար անհարմարավետության ժամանակահատվածը մեծ է 8% (13%) տարեկան

ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել մի շարք հատուկ միջոցառումներ:

(Рекомендации по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповых систем населенных мест. М. ЦНИИП Градостроительство 1980г.).

2.6 Մթնոլորտային օդը

Երևան քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով: 2021թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը* (ՄԱՑ) 2.14 է (փոշի՝ 1.15, ծծմբի երկօքսիդ՝ 0.34, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ օզոն՝ 0.05): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու և ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց* (աղյուսակ 2.6.1): 2021 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1 անգամ: Մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքիդի, 1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Նուբարաշեն համայքում գործում է 6 դիտակետ 11, 12, 13, 14, 34, և 35 դիտակետերը, որոնց գրանցած տվյալների վկայում են, որ տարածքում 2021 թվականին ծծմբի երկօքսիդի (SO_2) միջինացված կոնցենտրացիան կազմում է 0.05 մգ/մ³, ազոտի երկօքսիդի (NO_2) միջինացված կոնցետրացիան 0.01 մգ/մ³ (նկարներ 2.6.5 և 2.6.6):

Մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիաների (մգ/մ³) փոփոխությունները 2017-2021թթ

Աղյուսակ 2.6.1

Միացություն	Բնութագրիչ	Տարեթիվ					Տենդենց
		2017	2018	2019	2020	2021	
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.143	0.110	0.128	0.117	0.172	0.0064
	Փորձանմուշների քանակ	2401	1711	1729	1542	1755	
Ծծմբի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.029	0.028	0.018	0.013	0.017	-0.0040
	Փորձանմուշների քանակ	2428	1764	1757	1557	1769	
Ազոտի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.022	0.020	0.015	0.032	0.027	0.0022
	Փորձանմուշների քանակ	2403	1762	1751	1556	1768	
Գետնամերձ օզոն	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.008	0.007	0.006	0.004	0.005	-0.0008
	Փորձանմուշների քանակ	2394	1763	1738	1536	1766	



Նկար 2.6.1

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Նկար 2.6.2

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Նկար 2.6.3

Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Նկար 2.6.4



Նկար 2.6.5. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2021/ Երևան



Նկար 2.6.6 Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2021/ Երևան



Նկար 2.6.7. Երևանի գլխավոր հատակագիծ: «Շրջակա միջավայրի արդի վիճակը»

Ինչպես երևում է «Երևանի գլխավոր հատակագծի Շրջակա միջավայրի արդի վիճակը» նկար 2.6.7-ից, Նուբարաշեն վարչական շրջանի ամբողջ տարածքը գտնվում է օդի թույլատրելի ախտոտվածության գոտում:

Նուբարաշեն վարչական շրջանում բնակչության խտությունը կազմում է 5.74 մարդ/հա, ծանր արդյունաբերական խոշոր օբյեկտներ չկան, ինչից կարելի է ենթադրել, որ ավտոտրանսպորտի ազդեցությունը օդային ավազանի վրա էական չէ: Տարածքում օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում Սովետաշենի

աղբանոցը, չնայած այն հանգամանքին, որ գտնվում է Նուբարաշեն վարչական շրջանի սահմաններից դուրս: Աղբավայրում մասնավորապես տարվա չոր ամիսներին չվերահսկվող այրումներից առաջացած ծուխը նպաստավոր քամիների դեպքում կարող է իր ազդեցությունը թողնել օդային ավազանի վրա:

Այրումը որոշ ընդմիջումներով շարունակական բնույթ է կրում: Թափոնների նման այրումը ենթադրում է ցածր ջերմաստիճանի կրակ, որը քիչ թթվածին է սպառում և հետևաբար շատ ծուխ առաջացնում: Նման պայմաններում թունավոր նյութերն ավելի հեշտությամբ են արտադրվում և արտանետվում մթնոլորտ: (Նկար 28): Կուտակված խառը թափոններում (այդ թվում՝ օրգանական բաղադրիչները) տեղի ունեցող չվերահսկվող միկրոկենսաբանական ակտիվությունն առաջացնում է սուլֆատաջրածին (H_2S), որից էլ արտանետվում է կոյուղուն բնորոշ գազը: Ավելին, սուլֆատաջրածինը ծայրահեղ թունավոր է: Ցածր կոնցենտրացիաներն ընկալվում են որպես հոտ, իսկ բարձր կոնցենտրացիաներն ազդում են քթի նյարդային վերջավորությունների վրա:

Նկար 2.6.8. Նուբարաշենի աղբավայրում չարտոնված այրումից առաջացած ծխի հետք:

2.7 Աղմուկի մակարդակը

«Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերով (այսուհետ՝ նորմեր) սահմանված են պարտադիր պահանջներ, որոնք պետք է պահպանվեն տարբեր նշանակության շենքերի և շինությունների նախագծման, շինարարության և շահագործման, բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ընթացքում՝ աղմուկից պաշտպանության նպատակով, ինչպես նաև արտադրական, բնակելի, հասարակական շենքերում ու բնակելի կառուցապատման տարածքներում ձայնագիտական (ակուստիկ) միջավայրի նորմատիվ պարամետրերն ապահովելու համար:

Հաստատուն աղմուկ ստեղծող տեխնոլոգիական և ինժեներական սարքավորումների աղմուկի բնութագրերն են՝ ձայնային հզորության մակարդակները՝ Lw, դԲ, հաճախությունների ութ օկտավային շերտերում՝ 63-ից մինչև 8000 Հց միջին երկրաչափական հաճախություններով (ձայնային հզորության օկտավային մակարդակները), իսկ ոչ մշտական աղմուկ ստեղծող սարքավորումներինը՝ ձայնային հզորության համարժեք մակարդակները՝ Lwհմժ և ձայնային հզորության առավելագույն մակարդակները՝ Lwառ, հաճախությունների ութ օկտավային շերտերում:

Համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի դեպի աղմուկի աղբյուրն ուղղված շենքերի համար թույլատրվում է ձայնի համարժեք մակարդակի բարձրացում 5 դԲԱ-ով երթևեկության շերտից 7.5 մ հեռավորության վրա և տրանսպորտային հոսքերի աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի ցերեկը՝ 65 դԲԱ, գիշերը՝ 55 դԲ, իսկ առավելագույն մակարդակը՝80 դԲԱ:

Նուբարաշեն վարչական շրջանում բնակչության խտությունը կազմում է 5.74 մարդ/հա, ծանր արդյունաբերական խոշոր օբյեկտներ չկան, ինչից կարելի է ենթադրել, որ ավտոտրանսպորտից առաջացող աղմուկի մակարդակը գտնվում է թույալտրելի սահմաններում:

Վարչական շրջանի տարածքում առկա է հրաձգարան որտեղ պարբերապար իրականացվող կրակային պարառունքնրի ընթացքում հնարավոր է աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցում:

2.7.1 Էլեկտրամագնիսական ճառագայթներ

Քաղաքում էլեկտրամագնիսական ճառագայթման ամենահզոր կետային աղբյուրը Երևանի հեռուստահաղորդիչ կենտրոնի հեռուստաաշտարակն է, որը գտնվում է Նորք Մարաշ համայնքում: Տարածքում տեղադրված են նաև էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող մի քանի տասնյակ ռադիոտեխնիկական օբյեկտներ:

Բնակչության և շրջակա միջավայրի վրա արտաքին էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցության մեղմման հիմնական միջոցը՝ ճառագայթման աղբյուրից անհրաժեշտ տարածքային խզման /սանիտարապաշտպանական գոտի/ ապահովումն է:

Ներկայումս քաղաքի տարածքում նորմերի պահպանությունը հսկելու նպատակով էլեկտրամագնիսական դաշտի էներգիայի մակարդակի չափումներ չեն իրականացվում, ինչը հնարավորություն չի տալիս բավականին ճշգրիտ գնահատելու այն գոտիների չափերը, որտեղ բնակչության համար ճառագայթման ՍԹՄ-ն գերազանցում է: Ուստի քաղաքի տարածքում առանձնացվել են էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների ազդեցության գոտիներ, որտեղ չափերն ընդունված են ըստ «Рекомендации по охране окружающей среды в районной планировке», 1986:

Առաջնահերթ անհրաժեշտ է վերականգնել քաղաքի համար չափազանց կարևոր բնապահպանական նշանակություն ունեցող հեռուստաաշտարակի շրջակայքի կանաչ զանգվածները /Նորք Մարաշ, Նոր Նորք, Էրեբունի համայնքների տարածքներ/:

Հեռանկարում սպասվում է հեռուստաաշտարակի վրա տեղադրված ռադիոհեռուստահաղորդիչների գումարային հզորության աննշան ավելացում

կապված ծրագրերի հնարավոր ավելացման հետ: Գծային աղբյուրներից՝ օդային բարձրավոլտ ԷՀԳ, էլեկտրամագնիսական ճառագայթումը հեռանկարում չի փոփոխվի:

2.8 Հողերի բնութագիրը

Երևանի հողերի տիպը Գորշ կիսաանապատային է, տեղ-տեղ Պալեոհիդրոմորֆ կապակցված հողերի արկայությամբ (Նկար 2.8.1.):



Նկար 2.8.1. ՀՀ հիմնական հողատիպերի քարտեզ

Կիսաանապատային գորշ հողեր: Տարածվում են 800-1000 մ բարձրություններում, որոնց բնորոշ են հումուսային հորիզոնի ոչ մեծ հզորություն (25-40 սմ) և հումուսի ցածր պարունակություն (2%), քարքարոտություն, կմախքայնություն, կարբոնատների զգալի պարունակություն: Կարբոնատային հորիզոնից ցած հանդիպում են ցեմենտացված կարբոնատային և գիպսակիր շերտերը: Տեղ-տեղ նկատվում են աղակալումներ, որոնք ունեն թույլ կլանունակություն (20-30 մգ/էկվ), անբավարար ջրաֆիզիկական հատկություններ՝ հագեցած հողալկալի հիմքերով (pH=7,5-8,5):

Պալեոհիդրոմորֆ կապակցված հողեր: Տարածվում են Երևան քաղաքին հարող տարածքներում, գտնվում են տարագույն կավերի վրա, բնորոշ են թույլ հումուսացվածությամբ (0,8-1,3%) և թույլ կարբոնատությամբ (4-12%), աղակալվածությամբ, ճեղքավորվածությամբ, կավային մեխանիկական կազմով, հիմնային թույլ ռեակցիայով, գիպսացվածությամբ և միջին կլանունակությամբ, խիստ անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններով:

Համայնքում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.8.1. Հողօգտագործման արդի վիճակը

2002 - 2021թթ. ընկած ժամանակահատվածում վարչական շրջանի հարավ-արևմտյան հատվածում իրականացվել են բազմաթիվ հողահատկացումներ՝ բնակելի կառուցապատման համար, որոնք ներկայումս հիմնականում իրականացվել են: Մասնավորապես, արվել են հողատհատկացումներ անհատական կառուցապատման համար, 1 բազմահարկ շենքի համար, կառուցվել են հասարակական բնույթի մի քանի կառույցներ, վերակառուցման փուլում են գտնվում հոգեբուժարանը և Ղ.Ալիշանի ավան դպրոցը: Գրանցված արտադրական գոտիները՝ բացառությամբ, Սովետաշենի թռչնաբուծարանի, գործարկվում են մասամբ:

Ընդհանուր առմամբ առկա են հետևյալ նպատակային նշանակությունները.

- Գյուղատնտեսական նշանակ, հողեր,
- Բնակավայրերի հողեր,
- Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակ. օբյեկտների հողեր,
- Էներգետիկայի, կապի, կոմունալ ենթ. օբյեկտների հողեր,
- Հատուկ պահպանվող հողերի տարածքներ,
- Հատուկ նշանակության հողեր,
- Ջրային հողեր:

Նուբարաշենի վարչական շրջանը զգալի մասը կառուցապատված է 4-5 հարկանի բազմաբնակարան շենքերով: Ի պատիվ շրջանի բնակչության, ինչպես նաև ղեկավարության, Նուբարաշենը առանձնանում է բնակելի տարածքի բարեկարգ պատկերով, ինչպես նաև բարեկարգ մանկական հրապարակներով: Անհատական կառուցապատմամբ տարածքը զբաղեցնում է բնակելի կառուցապտման զգալի հատվածը: Հողային տարածքների մեծ մասը սեփականաշնորհված է:

Նուբարաշեն համայնքի հողերի փաստացի օգտագործման հաշվեկշիռը (հենակետային)

Աղյուսակ 2.8.1.1

Նուբարաշեն համայնքի հողերի փաստացի օգտագործման հաշվեկշիռը (հենակետային)		
Նպատակային նշանակությունը	**Հողատեսակ, գործառնական նշանակությունը**	**Նախագծային տարածք**
1	**2**	**3.00**
Գյուղատնտեսական նշանակության հողեր	վարելահող	**0.00**
	բազմամյա տնկարկներ, ընդամենը	**205.2**
	որից՝	
	պտղատու այգի	205.2
	խաղողի այգի	0.00
	արոտ	**0.00**
	այլ հողատեսքեր	**311.3**
	Ընդամենը	**516.5**
	բնակելի կառուցապատում	**196.0**

Կառուցապատման նշանակության հողեր	*որից՝*	
	անհատական կառուցապատում (մենատներ)	184.86
	բազմաբնակարան կառուցապատում	11.15
	ամառանոցներ	0.00
	հասարակական կառուցապատում	**18.52**
	որից՝	
	վարչական	0.16
	դպրոցներ և մանկապարտեզներ	3.67
	առևտրական և հասարակական սպասարկման	2.15
	բուժ-առողջական	10.22
	մարզական օբյեկտներ	0.91
	ուսումնական կրթական	1.26
	մշակութալուսավորչական	0.15
	խառը կառուցապատում	**128.39**
	ընդհանուր օգտագործման	**149.71**
	որից՝	
	ընդ. օգտագործման կանաչապատ տարածքներ	2.70
	փողոցներ, ճանապարհներ, հրապարակներ	47.01
	այլ հողեր	**187.84**
	Ընդամենը	**580.47**
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակ. օբյեկտների հողեր	արդյունաբերական	16.57
	գյուղատնտեսական արտադրական	183.72
	գիտա-արտադրական	0.00
	Ընդամենը	**200.29**
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	**էներգետիկայի**	1.57
	կապի	4.92
	կոմունալ ենթակառուցվածքների	13.44
	որից՝	
	կոմունալ	5.31
	գերեզմանոցներ	8.13
	տրանսպորտի	0.00
	Ընդամենը	**19.93**
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	**հատուկ պահպանվող տարածքների**	0.00
	պատմական և մշակութային	0.00
	որից՝	
	պատմամշակութային	0.00
	Ընդամենը	**0.00**
Հատուկ նշան. հողեր	Ընդամենը	**404.24**
Անտառային հողեր	Ընդամենը	**0.00**
Ջրային հողեր	Ընդամենը	**2.55**
Պահուստային հողեր	Ընդամենը	**0.00**
Ընդամենը հողեր		**1724.00**



Նկար 2.8.1.1. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ. Հողատարածքների վերլուծական ուրվագծ



Նկար 2.8.1.2. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ. Հողօգտագործման ուրվագծ



Նկար 2.8.1.3. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ. Հենակետային հատակագիծ



Նկար 2.8.1.4. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ. Կառուցապատման վերլուծություն ըստ գործառնական նշանակության

2.9 Մակերևութային և ստորերկրյա ջրահոսքեր

Նուբարաշենի վարչական շրջանի մակերևութային ջրերը թափվում են Գետառ գետ, որը իր հերթին պատկանում են Հրազդանի ջրհավաք ավազանին:

Գետառը սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերից բխող Քառասունակն աղբյուրներից 1570մ բարձրությունից, և, հոսելով հարավ-հարավ-արևմուրք, անցնում է Ավանի ձորահովիտը, ապա մտնում է Նորքի խոր ձորը և անցնելով Երևանի միջով, Շենգավիթի մոտերքում թափվում Հրազդան գետը: Երկարությունը՝ 24կմ, ավազանը՝ 158կմ²: Սնումը մթնոլորտային տեղումներից և ստորերկրյա ջրերից է, հորդացումը՝ գարնան ամիսներին:

Աղյուսակ 2.9.1

Գետառ	*Գետաբերան (59)*	*Նիտրատ իոն, կոբալտ, նատրիում, ՀԱԱ, քլորիդ իոն, սուլֆատ իոն, ԿՀՆ*	*3-րդ*	*5-րդ*
		Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
		Ամոնիում իոն, վանադիում	*5-րդ*	

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով: Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության կեղտաջրերը: Գործող մաքրման կայաններում իրականացվում են միայն մեխանիկական մաքրում և կոմունալ-կենցաղային կեղտաջրերն առանց լիարժեք մաքրվելու թափվում են մակերևութային ջրային ռեսուրսներ: Ամբողջապես չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ ջրային ռեսուրսներ են տանում մեծ քանակությամբ ազոտային և ֆոսֆորային միացություններ: Չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին

խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:



Նկար 2.9.1.



Նկար 2.9.2

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալկենցաղային կեղտաջրերը: 2020 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 35%-ում՝ 3-րդ դաս, և 60%-ում՝ 5-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:

Նուբարաշեն վարչական շրջանի ստորերկրյա ջրերի խորության ուրվագիծը ներկայացված է նկար 2.9.4-ում:



Նկար 2.9.3

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում ստորգետնյա ջրերը կապված են հետևյալ երկրաբանական և մորֆոկառուցվածքային տարրերի հետ.

- Ջրեր հրաբխային սարավանդների սահմաններում,
- Հրաբխային սարահարթի սահմաններում գտնվող ջրերը կապված են ռելիեֆի ծածկված գետահովիտների և ռելիեֆի մյուս «բացասական» հին ձևերի հետ:

Սարավանդի սահմաններում դրանք տեղադրված են երկու հատվածներում 0-2մ խորության վրա և մինչև 10.0-20.0 մետրից խորության վրա: Այս ջրերը բեռնաթափվում են Գետառ գետի մեջ:

Տարածքում առանձնացված տեղամասերի գրունտներում սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների արժեքները կազմել են՝

- 0.25g - 0.30g,
- 0.30g - 0.35g,
- 0.35g - 0.40g:

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաեւ հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երեք ինժեներաերկրաբանական շրջաններ.

- բարենպաստ,
- պայմանական բարենպաստ,
- անբարենպաստ:



Նկար 2.9.4. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Ստորերկրյա ջրերի խորության ուրվագիծ

2.10 Բուսական և կենդանական աշխարհի նկարագրություն

Համայնքում առկա հաբիթաթները և դրանց շրջակայքը կարող են հիմնականում սահմանվել որպես տարբեր աստիճանի աղքատացմամբ տափաստանային գյուղատնտեսական տարածքներ: Շրջակայքի գյուղական հաբիթաթները ներառում են քարածածկ արոտավայրեր՝ ոչխարների և խոշոր եղջերավոր անասունների համար, նախկին դաշտեր, թթի, ծիրանի և նշի ծառերով այգիներ: Ամենացածրադիր խոնավ հատվածներում կան Tamarix octandra և Arundo donax լոկալ պոպուլյացաներ: Նմանատիպ փոքր մակերեսով խոնավ տարածքներ կան նաև շրջակայքի դաշտերում: Ներքին սահմաններում, գերակայում է տափաստանային բուսականությունը: Որոշ տարածքները պատված են խոտով և խիստ չոր կլիմային բնորոշ խոտադաշտերով: Հարավային լանջի հրաբխային մոխրի և տուֆաքարի վրա առկա է առանձին բուսականություն: Բույսերի վերարտադրության վրա ազդեցություն են թողնում արածող հոտերը և նախիրները: Որոշ դաշտային հատվածներում բուսական ծակույթն ավելի խիտ է, իսկ բուսականությունն ու եղեգնուտները՝ փարթամ: Այստեղ հողն ավելի խոնավ է: Համայնքի ներքին սահմաններում հազվադեպ կարելի է հանդիպել թփեր և գաճաճ ծառեր: Ավելի հաստ հողային և հումուսային շերտ ունեցող տարածքներում առկա են երաշտադիմացկուն թփեր, օրինակ՝ տամարիսկ (մոշավայրի): Լքված տարածքներում նաև առկա են այլ թփեր և մշակային տեսակի ծառեր: Այդ տարածքների մշակումը դադարեցվել է տասնամյակներ առաջ: Տարածքները պատված են չիչխանի թփերով (Hippophae rhamnoides), թթենիներով (Morus alba), ընկուզենիներով (Juglans regia):

Համայնքի տարածքում և դրա շրջակայքում հատուկ պաշտպանվող բուսատեսակներ չկան:

Համայնքի տարածքում գրանցված են դեգրադացիայի փուլում գտնվող տափաստանային գոտու գյուղատնտեսական հաբիթաթներին բնորոշ կենդանատեսակներ: Հաբիթաթի պայմանները համապատասխանում են բուսականության գոտիների՝ չոր և նորմալ խոնավ պայմաններին: Չոր լանջերին և

ավելի բարձր դիրք ունեցող տարածքներին բնորոշ է շատ նոսր բուսականությունը: Այս պայմանները խիստ կարևոր են մորեխների, թիթեռների և խխունջների համար, քանի որ այստեղ կա անողնաշարավորների զգալի բազմազանություն: Սա սնարար հիմք է հանդիսանում սողունների և թռչունների համար: Թռչունների տեսակներից պայմաններն այստեղ նպաստավոր են (աղմուկի հանդեպ ոչ զգայուն) Anthus sp.-ի համար: Անողնաշարավոր ֆաունան ներկայացված է տափաստանային բնորոշ տեսակներով, ինչպիսիք են Calliptamus italicus, Sphingonotus caerulans, Oedipoda caerulans, Stenobothrus sp.: Տափաստանային խոտածածկ տարածքների համար խխունջների տիպիկ տեսակներն Xerolenta obvia-ն և Monacha cantiana-ն:

Այստեղ առկա այգիները նախկին գյուղատնտեսական տարածքներում պահպանված ծառերով միակ տարածքներն են, դրանք բնադրման վայրեր են ճնճղուկների ընտանիքին պատկանող Miliaria calandra և Emberiza sp. Տեսակների համար: Լայն բաց հաբիթաթները որսի համար նպաստավոր տարածքներ են թե այստեղ բնակվող գիշատիչ թռչունների համար, ինչպիսին Milvus migrans է և թե միգրացիայի արդյունքում այստեղ հասած և ձմեռակացի եկած տեսակների համար, ինչպիսին Falco columbarius-ն է: Ենթադրվում է, որ այստեղ կլինեն ևս մի քանի տեսակներ: Դաշտի երկայնքով աճող եղեգնուտները տափաստանային հաբիթաթներ են միգրացիայի արդյունքում այստեղ գտնվող այնպիսի թռչունների համար, ինչպիսիք Emberiza schoeniclus, Motacilla alba, և Hirundo rustica-ն են: Կենդանիները կարող են բնակություն հաստատել նախկին այգիներում, որոնց տարածքներն այսօր չեն օգտագործվում:

Գրականության ուսումնասիրության արդյունքներից կարելի է փաստել, որ բուն համայնքի տարածքում և դրա շրջակայքում հատուկ պաշտպանվող կենդանատեսակներ չկան:

2.11 Պահպանվող տարածքներ

Համայնքում ներառված տարածքում բնության պահպանվող հատվածներ չկան: Համայնքին ամենամոտը գտնվում է «Էրեբունի» արգելոցը: Արգելոցը

կազմավորվել է 1981 թվականին՝ Էրեբունի վարչական շրջանի տարածքում, կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում՝ ծովի մակերևույթից 1300-1450մ բարձրություններում՝ դաշտավլուկազգիների վայրի ազգակիցների (մասնավորապես վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդի) պահպանության նպատակով: Այժմ արգելոցն զբաղեցնում է 118.75 հա տարածք, համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի N 827-Ն որոշման:

Բուսական աշխարհն ընդգրկում է բարձրակարգ բույսերի 176 ցեղի և 42 ընտանիքի 278 տեսակ, որոնցից 7-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի վայրի ցորենի 4 տեսակից 3-ը (արարատյան, ուրարտու և միահատիկ)՝ ներտեսակային մեծ բազմազանությամբ (շուրջ 110 տարատեսակ): Վայրի դաշտավլուկազգիներից աճում են նաև վայրի միամյա աշորան (Վավիլովի աշորա), այծակնի և գարու մի քանի տեսակներ, ինչպես նաև շատ հազվագյուտ անքիստ բթաթեփուկը և արևելյան արմատագլխիկը:
Հանդիպում են բազմաթիվ հազվագյուտ տեսակներ՝ Տուրնֆորի կանգարը, խոշորածածկոց ակտինոլեման և անցողուն հոհենակերիան: Կիսաանապատային բույսերից տարածված է հաստասռնակ բոշխը, հիմնական մասն զբաղեցնում են դաշտավլուկատարախոտային համակեցությունները, որտեղ գերակշռում են վայրի ցորենները: Հանդիպում են լեռնաչորասեր բույսեր՝ գազի մի քանի տեսակների գերակշռությամբ:

2.12 Թափոնների կառավարում

Համայնքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով: Այդ նպատակով բնակելի շենքերին հարող տարածքներում տեղադրված է 136 աղբաման: Որպես համայնքի աղբավայր ծառայում է Սովետաշենի աղբավայրը:

1,1 միլիոն բնակչություն ունեցող մայրաքաղաք Երևանում ներկայում քաղաքային կոշտ թափոնների մեծ մասը թափվում է քաղաքից 11կմ հարավ-արևելք գտնվող Նուբարաշենի աղբավայրում, ինչպես նաև մի շարք այլ՝ ավելի փոքր

աղբավայրերում: Նուբարաշենի աղբավայրը գտնվում է Երևանի կենտրոնից մոտ 12կմ հարավ՝ Էրեբունի և Նուբարաշեն շրջանների հարևանությամբ, զբաղեցնում է 52.3 հա տարածք:

Տարածքում աղբաթափությունը սկսվել է վաղ 1960-ականներին. ըստ հաշվարկների այնտեղ կուտակված են 6-ից 8 միլիոն տոննա կոշտ թափոններ: Ներկա դրությամբ մայրաքաղաքի տարածքից քաղաքային աղբավայր է տեղափոխվում օրական միջին հաշվով շուրջ 1000-1200 տոննա (տարեկան՝ 365-440 հազար տոննա) կենցաղային և այլ բնույթի աղբ:

Կենցաղային աղբը վերամշակման կամ տեսակավորման չի ենթարկվում, այլ խտացվում և վնասազերծվում է՝ ծածկվելով 25-30սմ հողի շերտով: Ներկայումս Նուբարաշենի թափոնակուտակիչում տեղակայված է կենսագազի հավաքման և այրման կայանը, որը նպաստում է աղբավայրում ջերմոցային գազերի արտանետման նվազեցմանը՝ ապահովելով շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում: Նուբարաշենի գործող թափոնակուտակիչում՝ մոտ 8 հա տարածքում, գազահավաք սարքերի միջոցով, ուղղահայաց փորված հորատանցքերից հորիզոնական գազատար խողովակով մեթան գազը մղվում է կենտրոնական ուղղահայաց խողովակ (ջահ) և այրվում: Տարածքը ծածկված է հերմետիկ թաղանթով և հողի շերտով: Կայանի շահագործման արդյունքում հավաքվում և այրվում է մոտ 350-400 մ^3/ժ արտադրողականությամբ կենսագազ: Կենսագազի հավաքման և այրման կայանը Երևան համայնքին է հանձնվել ՄԶՄ ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի և ճապոնական «Շիմիձու» կորպորացիայի միջև 2009թ. մարտի 10-ին կնված համաձայնագրի արդյունքում: Երևանի քաղաքապետի որոշմամբ այժմ կայանի շահագործումն իրականացնում է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲ ընկերությունը:

Նուբարաշենի աղբավայրը տեսանելի է Երևանի բարձր կետերից: Քաղաքային ծայրամաս հանդիսանալու պատճառով լանդշաֆտը համարվում է հետաքրքրություն չներկայացնող: Մեկ այլ գործոն է աղբավայրից արտանետվող հոտը:

2.12.1. Գերեզմանատներ

Նուբարաշեն համայնքում տեղակայված է թվով 2 հատ գերեզմանատուն, ընդհանուր 8.13 հա տարածքում: Գերեզմանատները գործող են:

Գերեզմանատների համար նախատեսված սանիտարա-պաշտպանիչ գոտին 300մ ապահովված չէ:

Առաջարկվում է գերեզմատների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հողարկավորումների ընթացքում այն չխախտելու համար:

2.12.2. Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը կառուցվել է 1975թ. ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի որոշմամբ, երբ մի շարք պեստիցիդներ՝ օրինակ, դիքլորդիֆենիլ-տրիքլորէթանը (ԴԴՏ), իսկ հետագայում նաև հեքսաքլորցիկլոհեքսանը (ՀՔՑՀ), որոնք կայուն օրգանական աղտոտիչներ (ԿՕԱ) են, արգելվեցին համընդհանուր կերպով, այդ թվում նախկին Խորհրդային Միության (ԽՄ) տարածքում: Այն նախատեսված է եղել ժամկետանց, ինչպես նաև կայուն քլորոօրգանական քիմիկատների թաղման եւ հետագայում ոչնչացման համար:

Նկար 2.12.2.1. Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը Հայաստանում ստեղծվել է Երևան քաղաքի հարավ-արևելյան եզրամասում՝ Էրեբունի վարչական շրջանի սահմաններում, Ողջաբերդ-Գեղադիր ավտոճանապարհից 5կմ հարավ-արեւմուտք հատվածում: Զբաղեցնում է 0.8հա ցանկապատված տարածք և տեղաբաշխված է որպես արոտավայր օգտագործվող համայնքային հողերի վրա՝ հեռավոր մեղմաթեք լանջին: Գերեզմանոցը գտնվում է սողանքային գոտում եւ արդեն տեղաշարժվել է 10 մետրով:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում պահվում է 512 տոննա թունաքիմիկատներ, որոնք պետք է տարհանվեն և պահեստավորվեն: Գերեզմանոցում թունաքիմիկատների փաթեթավորումը քայքայված է, գերեզմանոցը գտնվում է ակտիվ սողանքային գոտում և իրենից վտանգ է ներկայացնում ջրերի և մոտակա բնակավայրերի համար: Գերեզմանոցի անմիջական հարևանությամբ գտնվում է Էրեբունի արգելոցը, որտեղ պահպանվում է վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդը:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի արտափորման, տարհանման և մաքրման համար նախկինում ներկայացվել է նախագիծ: Համաձայն դրա՝ Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի չեզոքացման համար կպահանջվի ավելի քան 7 տարի:



Նկար 2.12.2.2 Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց

Նախագծի պատվիրատուն ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրն է, ձեռնարկողը՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն, նախագիծը կազմել են չեխական Deconta ու Geotest ընկերությունների կոնսորցիումը և «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ-ն:

Նկար 2.12.2.3 Հետազոտվող նմուշներում պեստիցիդների հայտնաբերման պատկերը

Նախագծով նախատեսված է՝

- խիստ աղտոտված կայուն օրգանական աղտոտիչներ (ԿՕԱ) պարունակող պեստիցիդների և ժամկետանց պեստիցիդների բնապահպանորեն անվտանգ հեռացումը Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից՝ տարածքից դուրս տնօրինման նպատակով,
- մնացորդային աղտոտվածության և հավանականորեն աղտազերծված հողերի ապահով պարփակումը տեղում,
- վերականգնել տարածքը համաձայնեցված ապագա հողօգտագործման համար պիտանի տեսքով, ներառյալ տարածքի կայունացումը՝ նպատակադրվելով կանխել կամ նվազեցնել երկրատեխնիկական անկայունության հետ կապված ապագա ռիսկերը:

- արխիվային փաստաթղթերից հայտնի է դարձել, որ թունաքիմիկատների թաղման կառույցը բաղկացած է եղել 5մ խորությամբ և 120մ x 20մ ընդհանուր մակերեսով չորս ուղղանկյուն, կավով երեսպատված և ծածկված խցերից: 2010 թ.-ին կայունությունը բարձրացնելու նպատակով՝ թունաքիմիկատների սկզբնական թաղման տարածքում և ենթամակերեսային սողանքի մոտավոր հատվածում տեղադրվել է ավելի ընդարձակ վերնածածկ, որը կազմված է հողային զանգվածից և սինթետիկ թաղանթից:
- գերեզմանոցի մարմինը կազմված է հինգ խցերից (սկզբնապես ենթադրվող չորսի փոխարեն): Առաջին, երկրորդ և երրորդ խցերը լիովին ծածկված են թմբով: Չորրորդ խուցը մասամբ ծածկված է թմբով, իսկ հինգերորդը գտնվում է թմբից դուրս: Երթադրվում է, որ 5-րդ խուցը ստեղծվել է ավելի ուշ՝ որպես արտահերթ միջոցառում: Առաջին խուցը պարունակում է խոնավ պեստիցիդներ, հավանաբար անջրաթափանց է և պարփակված է բետոնե կոնստրուկցիայով: Երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ խցերը պարունակում են չոր պինդ պեստիցիդներ և ըստ էության իրենցից ներկայացնում են բնական կավի/կավավազահողի մեջ փորված փոսեր, այլ ոչ թե հատուկ այդ նպատակի համար կառուցված պարփակման հորեր:
- Գրանցված է, որ տարածքում տեղակայվել են 33 տարբեր օրգանական և անօրգանական պեստիցիդներ և ագրոքիմիկատներ:
- Բացի նախորդ տարիներին իրականացված հետազոտություններից, 2017 թ.-ին իրականացվել է նոր, ավելի մանրակրկիտ հետազոտություն: Վերլուծությունները ցույց են տվել, որ խցերում թաղված են եղել լայն սպեկտրի քիմիական նյութեր, որոնց գերակշիռ մասը կազմում են ծծումբը, ԴԴՏ-ն և դրա մետաբոլիտները (ԴԴԵ, ԴԴԴ) և ՀՔՑՀ-ն: Կարբարիլը/սևինը հայտնաբերվել է մեծ քանակությամբ: Կան նաև պղնձի, ֆոսֆորի, ցինկի և մկնդեղի պարունակություններ՝ տարբեր խտություններով:
- Արձանագրվել է, որ քիմիական նյութերի միայն մի մասն է գտնվում խցերում և դրա շրջակայքում: Գերեզմանաթմբին հարող տարածքում հանդիպում են

հատկապես ՀՔՑՀ-ի և ԴԴՏ-ի քանակություններ, ներառյալ դրանց քայքայման արգասիքները, ինչպես նաև առկա են ծծմբի և ցինկի մնացորդային քանակներ:

- Գերեզմանոցի ցանկապատված տարածքի սահմաններից դուրս հայտնաբերվել են միայն ԴԴՏ-ի և դրա քայքայված մետաբոլիտների պարունակություններ:
- Նախատեսվում է 5 փուլով իրականացնել թունաքիմիկատների գերեզմանոցի չեզոքացման նախագիծը:
- Արտափորման աշխատանքներն իրականացվելու են մասամբ փոքր էքսկավատորի միջոցով, մասամբ ձեռքով՝ վակուում վրանով ծածկված հատվածում: Արտափորման ենթակա թունաքիմիկատների և աղտոտված հողերի ընդհանուր գնահատված զանգվածը կազմում է 13655 տ:

Նախագծի բարեհաջող իրականացման արդյունքում հնարավոր կլինի՝

- ազդակիր համայնքների բնակչության առողջական ռիսկերի նվազեցում,
- սողանքի ակտիվացման դեպքում, թափոնի և աղտոտման տարածման և Երևան քաղաքի համար մեծ ռիսկի վերացում,
- տարածքին հարող ճանապարհների բարեկարգում և այլ ենթակառուցվածքների զարգացում,
- շրջակա տարածքների սոցիալ-տնտեսական կարգավիճակի հնարավոր բարելավում և վարկանիշի» բարձրացում,
- հարևանությամբ գտնվող ամառանոցային գոտու հնարավոր ակտիվացում
- Երևանի մերձակայքում վտանգավոր նյութերի օջախի վերացում, լանդշաֆտի վերականգնում,
- հարակից «Էրեբունի» արգելոցի վրա ազդեցության նվազեցում և գրավչության բարձացում,
- ջրային (ստորգետնյա և մակերևութային) ռեսուրսների աղտոտվածության աստիճանի նվազեցում, հետագա աղտոտման կանխում,
- հողերի աղտոտվածության աստիճանի նվազեցում,
- կենդանական և բուսական աշխարհի վերականգնում:

2.13 Կանաչապատման համակարգը

Նուբարաշեն համայնքի կանաչապատումը սկսվել է անցյալ դարի 30-ական թվականներից՝ համայնքի կառուցման հետ միարժամանակ: Այդ ժամանակահատվածում են սկսվել զբոսայգիների, պուրակների, փողոցների կանաչապատման աշխատանքները:

Այս պահին վարչական շրջանի կանաչապատ տարածքները կազմում են 2.7 հա, փողոցների սիզամարգերը՝ 0.0186 հա, պուրակները՝ 0.16 հա, 4 զբոսայգի, առկա է 1549 ծառ:

Նուբարաշեն համայնքի համար տարբեր ֆունկցիոնալ նշանակության կանաչ տնկարկների բաշխումը և բնակչության ապահովվածությունը բերվում է աղյուսակ 2.13.1-ում:

Տարբեր ֆունկցիոնալ նշանակության կանաչ տնկարկների մակերեսները (հա և բնակչության ապահովվածությունը (մ²/մարդ)

Աղյուսակ 2.13.1

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ²/մարդ
1. Ընդհանուր օգտագործման	2.7	2.73
2. Սահմանափակ օգտագործման	86.9	87.77
3. բազմամյա տնկարկներ (պտղատու այգիներ)	205.2	207.27
Ընդամենը	294.8	297.77

- ✓ Ընդհանուր օգտագործման կանաչապատմանն են վերագրվում՝ համայնքային զբոսայգիներն ու պուրակները, որոնք նախատեսված են համայնքի բնակչության կարճատև հանգստի կազմակերպման համար:
- ✓ Սահմանափակ օգտագործման կանաչապատմանն են վերագրվում՝ տարբեր հասարակական նշանակության ու արտադրական ձեռնարկությունների տարածքներում գտնվող կանաչապատ զանգվածները:

- ✓ Հատուկ նշանակության կանաչապատմանն են վերագրվում՝ սանիտարապաշտ-պանական նպատակներով իրականացված կանաչապատ զանգվածները, այդ թվում նաև փողոցների ու մայրուղիների մայթերի եզրերի կամ երթևեկելի մասի բաժանիչ շերտերի կանաչապատումը:

Ինչպես երևում է աղյուսակ 2.13.1-ից, 1 շնչին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը զգալիորեն ցածր է ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշմամբ հաստատված նորմայից՝ 10մ²/մարդ /մեծ, խոշոր և խոշորագոյն քաղաքներ/:

Ինչպես երևում է աղյուսակից, ապահովվության ցուցանիշը չափազանց ցածր է (2.73 մ²/մարդ, 10 մ²/մարդ նորմայի փոխարեն):

Բնակչության ներկայիս թվաքանակի պայմաններում Նուբարաշեն համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսների դեֆիցիտը նորմատիվային ցուցանիշի համեմատությամբ կազմում է 7.2 հա կամ 7.27 մ²/մարդ:

Հեռանկարում, համայնքի բնակչության կանխատեսվող թվաքանակի պայմաններում (12.5 հազար մարդ), ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բնակչության ապահովության դեֆիցիտը կկազմի 9.8 հա կամ 7.84 մ²/մարդ:

2.14 Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր

Ճանապարհատրանսպորտային մասով, բացի գոյություն ունեցող կարմիր գծերի հստակեցումից և ճշգրտումից, վերակառուցողական բնույթ կրող փոփոխություններ չեն նախատեսվում:



Նկար 2.13.1. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման գոտիների և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ուրվագիծ



Նկար 2.14.1. Գոտևորման նախագիծ. Ճանապարհափողոցային ցանցի դասակարգում



Նկար 2.14.2. Գոտևորման նախագիծ. Կարմիր գծեր

3. ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

3.1 Ջրամատակարարում

Նուբարաշեն վարչական շրջանում Նուբարաշեն բնակավայրի համար մշակվում է Գլխավոր հատակագիծ՝ 1724 հա մակերեսով և 12.5 հազ.մարդ հեռանկարային բնակչությամբ: Բնակավայրի 80%-ը ապահովված է ջրամատակարարման ցանցով՝ Φ25-600 մմ խողովակաշարերով, որի 60%- ը մետաղական է, իսկ 40%-ը՝ պոլիէթիլենե՝ Φ50-200մմ խողովակաշարերով: Վերջիններիս վերակառուցվել են անցած 5 տարիների ընթացքում: Խողովակաշարի թաղման միջին խորությունը հողի նիշից կազմում է 0.9-1.2մ՝: Փողոցների հանգուցային մասերում նախատեսված են փականային հորեր, որոնցում տեղադրված են համապատասխան տրամագծի սողնակներ կամ փականներ: դրանցով կարգավորվում է ջրամատակարարման ցանցի աշխատանքային ռեժիմը, քանի որ ջրամատակարարումը բնակավայրին տրվում է գրաֆիկով: Բնակավայրը սնվում է Նուբարաշենի վերին գոտում գտնվող 1000մ³ ՕԿՋ-ից: ՕԿՋ-ից ջուրը բաշխվում է 6 ուղղություններով փակուղային տարբերակով միացվում բնակավայրի ցանցին: Նախկինում կառուցված մետաղական խողովակները գտնվում են անմխիթար վիճակում: «Վեոլիա Ջուր՝» ՓԲԸ-ի կողմից պլանավորված է մետաղական խողովակները 5 տարվա ժամանակահատվածում փոխարինել պոլիէթիլենե խողովակներով, քանի որ պողպատե խողովակներում առկա են 15-20%-ի չափով ջրի կորուստներ՝ վնասվածության պատճառով:

Փողոցների 60%-ը ասֆալտապատ է, իսկ 40%-ը հողային ճանապարհ է: Նոր հատկացված հողատարածքներում ջրամատակարարման ցանցը բացակայում է, այն իրականացվում է անհատական մոտեցումներով՝ բնակիչների կողմից:

Համաձայն գոտևորման նախագծի՝ վարչական շրջանում նախատեսված բնակելի նոր թաղամասի համար նախատեսված է փողոցներում նոր ջրամատակարարմն ցանցի ստեղծում Φ160-50 մմ խողովակաշարերով՝ գոտիավորումով: Փողոցների հանգուցային մասերում նախատեսել դիտահորեր, ցանցի սպասարկման և շահագործման համար իրենց սողնակներով ըստ

տրամագծերի: Նոր նախագծվող թաղամասի համար անհրաժեշտ է նաև նախատեսել հակահրդեհային հիդրանտներ 200մմ շառավղով, համաձայն հրդեհաժիջման նորմերի:

3.2 Ջրահեռացման ցանց

Բնակավայրը կոյուղացված է 50 %-ը, իսկ մնացած փողոցներում և հարակից հատկացված հողակտորներում բացակայում են ջրահեռացման ցանցերը, որոնցում նախատեսված են տեղական սեպտիկ հորեր իրենց հողակտորներում: Գոյություն ունեցող ցանցը բախկացած է Φ150-500մմ կերամիկական և ազբոցեմենտե խողովակներից, որոնց 15-20%-ը գտնվում է անմխիթար վիճակում՝ մասնակի սողանքների և վթարային տեղամասերի պատճառով: Վերջին 2 տարվա ընթացքում հին խողովակաշարերը 15-20% խողովակաշարերը փոխարինվել են ակոսավոր պոլիէթիլենե խողովակներով՝ Φ150-500մմ: Թաղման միջին խորությունը հողի նիշից՝ 1.5-2.0 մ: Ջրահեռացման ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր՝ միացման կետերում, հանգուցային կամ անկյունային կետերում և նորմատիվային հեռավորությունների վրա՝ ցանցում ստուգումներ կատարելու և հետագա շահագործման համար: Ջրահեռացման ցանցերը չունեն կենտրոնացված հեռացում, այն ճուխավորումներով լցվում են բնակավայրի ստորին մասով անցնող կիրճի մեջ:

Համաձայն գոտևորման նախագծի՝ վարչական շրջանում նախատեսված բնակելի նոր թաղամասի համար նախատեսված է փողոցներում նոր ջրահեռացման ցանցի ստեղծում Φ160-500 մմ խողովակաշարերով: Փողոցների հանգուցային մասերում, նորմատիվային հեռավորությունների վրա, անկյուններում և կողային միացումների տեղամասերում նախատեսել դիտահորեր Φ1000-1500մմ, ցանցի սպասարկման և շահագործման համար:

Ջրահեռացման ցանցի վերջնամասում նախատեսել տեղական մաքրման կայան ըստ արտադրողականության:

3.3 Անձրևաջրերի հեռացման ցանց

Բնակավայրը ապահովված է անձրևաջրերի հեռացման ցանցով՝ մոտ 30 %-ի չափով: Այն իրականացված է հիմնական կենտրոնական փողոցներում, իսկ մնացած փողոցներում, որոնց ջրերը մասնակի ցանցի միջոցով հեռացվում են մոտակա առուների և կիրճի մեջ, ցանցերի վրա նախատեսված են անձրևառրսիչներ և դիտահորեր: Հարակից հատկացված հողակտորներում նույնպես բացակայում են անձրևաջրերի հեռացման ցանցերը, որոնց ջրերը հեռացվում են մոտակա առուները կամ սիզամարգերի մեջ: Գոյություն ունեցող ցանցը բախկացած է Φ200-400մմ կերամիկական և ազբոցեմենտե խողովակներից, որոնց 15-20%-ը գտնվում է անմխիթար վիճակում՝ մասնակի սողանքների և վթարային տեղամասերի պատճառով: Վերջին 2 տարվա ընթացքում հին խողովակաշարերը 15-20% խողովակաշարերը փոխարինվել են ակոսավոր պոլիէթիլենե խողովակներով՝ Φ200-300մմ: Թաղման միջին խորությունը հողի նիշից՝ 0.8-1.40 մ: Անձրևաջրերի ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր՝ միացման կետերում, հանգուցային կամ անկյունային կետերում և նորմատիվային հեռավորությունների վրա՝ ցանցում ստուգումներ կատարելու և հետագա շահագործման համար:

Համաձայն գոտևորման նախագծի՝ վարչական շրջանում նախատեսված բնակելի նոր թաղամասի համար նախատեսված է փողոցներում անձրևաջրերի հեռացման նոր ցանցի ստեղծում Φ250-500 մմ խողովակաշարերով: Փողոցների հանգուցային մասերում, նորմատիվային հեռավորությունների վրա, անկյուններում և կողային միացումների տեղամասերում նախատեսել դիտահորեր Φ1000-1500մմ ցանցի սպասարկման և շահագործման համար:

Անձրևաջրերի հեռացման ցանցի վերջնամաուում նախատեսել տեղական մաքրման կայան ըստ արտադրողականության:

3.4 Ոռոգման ցանց

Բնակավայրը ապահովված է ոռոգման ցանցով՝ մասնակի, հիմնականում կենրոնական փողոցներում, որոնցով ոռոգվում են բարեկարգված այգիները, սիզամարգերը, փողոցներում՝ մայթերին հարող մասերում՝ կանաչ զանգվածները: Ոռոգման ցանցի ջրամատակարարումը իրականացվում է բնակավայրի վերին մասում գտնվող ջրանցքից՝ պոմպի միջոցով: Ցնացերի համար նախաատեսված են պողպատե և պոլիէթիլենե խողովակներ՝ Φ50-200մմ: Ցանցերի հանգուցային մասերում նախատեսված են փականներ կամ սողնակներ՝ ըստ տրամագծերի և ճյուղավորումների վրա՝ ջրցան ծորակներ, Φ20-25 մմ, մասնակի տեղամասերում՝ առանցքային ցայտիչներ՝ Φ15-20մմ: Նախագծային աշխատանքները կատարված են ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների համաձայն:

3.5 Էլեկտրամատակարարում

Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի էլեկտրական ցանցը հանդիսանում է «Հայաստանի Էլեկտրական Ցանցերե ՓԲ ընկերության Երևան քաղաքի Հարավ շահագործման և իրացման մասնաճյուղի մաս:

Բնակավայրը սնվում է Նուբարաշեն 110/10կՎ, 2ճ16մՎԱ համակարգի իջեցնող ենթակայանից:

Նշված կենտրոններից 10 կՎ հիմնականում օդային գծերով մատակարարվում են բնակավայրին՝ տարբեր նշանակության և կազմվածքի ենթակայաններին, որոնցից իրականացվում է բնակավայրի էլեկտրամատակարարումը վերգետնյա ցանցերով՝ համապատասխան կտրվածքներով: Վերը նշված ենթակայաններից է իրականացվում նաև փողոցային լուսավորությունը:

Ներկայացվող հատակագծի վրա տեղադրված են վարչական շրջանի տարածքում գործող իջեցնող ենթակայանները և վերջիններիս միջև 10կՎ օդային ցանցը:



Նկար 3.1 Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ: Արդյունաբերական, հատուկ նշանակության և կոմունալ ենթակառուցվածքի օբյեկտների տեղակայման վերլուծության ուրվագիծ

3.6 Հեռախոսակապ

Ներկայումս Նուբարաշեն վարչական շրջանի ստացիոնար հեռախոսակապը իրականացվում է 23-24 և 28 ԱՀԿ-ների միջոցով:

Առաջիկայում այս շրջանում TEAM ՓԲԸ կողմից խոշոր ներդրումային ծրագրեր չեն նախատեսվում: Կատարվում են ընթացիք վերանորոգման, ինչպես նաև նոր օբյեկտների գործող ցանցին միացման աշխատանքները:

3.7 Գազամատակարարում

Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի համակարգում գազամատակարարման ցանցի մոտ 60%-ով իրականացված է՝ ստորգետնյա և վերգետնյա խողովակաշարերով: Գազամատակարարումը իրականացվում է Նուբարաշենի հոգեբուժարանի դիմացով անցնող միջին ճնշման Φ426ճ6 մմ գազատարից: Φ219 x6 մմ ստորգետյա տեղադրումով՝ մինչև բնակավայրի սկբնամաս, որից հետո գազատարը տեղադրված է վերգետնյա հենարանների վրայով՝ Φ32 x3 - Φ159 x4 մմ խողովակներով, միջին բարձրությամբ 1.5-2.0 մ, իսկ փողոցների և բնակելի տների մուտքերի մասերում բարձրացվում է 5 մ.՝ տրանսպորտային անցումներ ապահովելու համար:

Վերգետնյա խողովակաշարը բախկացած է պողպատե խողովակաշարից, իսկ ստորգետնյա հատվածներում՝ մասնակի պոլիէթիլենային խողովակներից: Միացման կետից 500 մ շառավիղով նախատեսված են գազի կարգավորիչ պահարաններ, որտեղ միջին ճնշման գազատարը վերածվում է ցածր ճնշման գազատարի, որտեղից իրականացվում է սպառողների գազամատակարարումը: Միացման հանգույցներում նախատեսված են փականներ կամ սողնակներ, իսկ սպառողների համար նախատեսված են հաշվիչ պահարաններ՝ վերգետյա տեղադրումով: Ստորգետնյա գազատարները իրականացնելու ժամանակ նախատեսել պղինձե լար և ժապավեն:

Վերգետնյա տեղադրվող խողովակաշարերը կառուցելուց հետո կատարել ցանցի փորձարկում և փչամաքրում: Բացի դրանից, զոդման հանգույցներում անհրաժեշտ է կատարել ուլտրամանուշակագույն ճառագայթներով լուսանկարում: Խողովակաշարերը և հենարանները անհրաժետ է ներկել յուղաներկով 2 անգամ:

Հեռանկարում գազամատակարարման համակարգում նախատեսված է վթարային գազատարների վերատեղադրման աշխատանքներ՝ 10-20 %-ով:

Գազատար ցանցերի կառուցման համար տվյալները և նյութերի ծախսը ներկայացված են 3.7.1 աղյուսակում:

Աղյուսակ 3.7.1

Հ/Հ	Գազատար խողովակի տրամագիծը, մմ	Քանակը, գ.ծ.մ	Միավորի արժեքը, հազ. դրամ/մ	Ընդամենը, հազ. դրամ
	Dy 426	2300	42.10	96830.0
	Dy 200	1000	21.20	21200.0
	Dy 150	250	16.27	4067.5
	Dy 125	530	14.20	7526.0
	Dy 100	740	9.93	7348.2
	Dy 80	2000	7.16	14320.0
	Dy 50	3100	5.2	16120.0
	հաշվառման հանգույց	1 հատ	5000.0	5000.0
Ընդամենը'				**172411.7**



Նկար 3.4.1 Ինժեներական ենթակառուցվածք: Ջրամատակարարում, կենցաղային կոյուղի, ոռոգում, հեղեղատար կոյուղի



Նկար 3.5.1 Ինժեներական ենթակառուցվածք: Էլեկտրամատակարարման ուրվագիծ



Նկար 3.7.1 Ինժեներական ենթակառուցվածք: Գազամատակարարման ուրվագիծ

4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Այլընտրանքային տարբերակներ

Նախատեսվող գործունեության պլանավորման փուլում դիտարկվել են հետևյալ այլընտրանքային տարբերակները՝

1. Զրոյական տարբերակ, այն է՝ չիրականացնել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագիծ,
2. Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևվորման նախագծի իրականացում:

1. Զրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չեղարկում) Զրոյական տարբերակի դեպքում աշխատանքային նախագծով նախատեսված գործունեությունը չի իրականացվի: Այս տարբերակը ֆինանսատնտեսական և տեխնիկական իրագործելիության տեսանկյունից ամենացանկալին է: Նուբարաշեն վարչական շրջանի զարգացման միտումները բխում են մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնադրույթներից, որտեղ ներկայացված են վարչական շրջանում առկա հիմնախնդիրները: Զրոյական տարբերակի ընտրման դեպքում այդ հիմնախնդիրները կմնան չլուծված, ինչը հակասում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթներին: Հետևաբար, կարելի է փաստել, որ զրոյական տարբերակը անցանկալի է:

2. Ընտրված տարբերակի իրականացում Աշխատանքային նախագծով նախատեսված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագծի իրականացումը հնարավորություն կստեղծի լուծել Երևան քաղաքի և Նուբարաշեն վարչական շրջանի հիմնախնդիրները և ծրագրերը, դրանք են՝

- ✓ ազդակիր համայնքների բնակչության առողջական ռիսկերի նվազեցում,
- ✓ տարածքին հարող ճանապարհների բարեկարգում և այլ ենթակառուցվածքների զարգացում,
- ✓ շրջակա տարածքների սոցիալ-տնտեսական կարգավիճակի հնարավոր բարելավում և վարկանիշի բարձրացում,
- ✓ հարևանությամբ գտնվող ամառանոցային գոտու հնարավոր ակտիվացում,

- ✓ Երևանի մերձակայքում վտանգավոր նյութերի օջախի վերացում, լանդշաֆտի վերականգնում,
- ✓ հարակից «Էրեբունի» արգելոցի վրա ազդեցության նվազեցում և գրավչության բարձացում,
- ✓ ջրային (ստորգետնյա և մակերևութային) ռեսուրսների աղտոտվածության աստիճանի նվազեցում, հետագա աղտոտման կանխում,
- ✓ հողերի աղտոտվածության աստիճանի նվազեցում,
- ✓ կենդանական և բուսական աշխարհի վերականգնում:

Հետևաբար, մայրաքաղաքի և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից, նախատեսվող գործունեությունը կունանա դրական ազդեցություն:

5. ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄԸ

5.1. Տարածքի գոտիավորումը

Հատակագծային ստրուկտուրայի, համալիր տրանսպորտային համակարգի, ինժեներական ենթակառուցվածքների և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների կատարելագործման հետ միաժամանակ, գոտիավորման նախագծով նախատեսվում են՝

- Սանիտարա–պաշտպանիչ գոտիների կազմակերպում, բարեկարգում և կանաչապատում,
- Խախտված տարածքների վերականգնում:

Նախագծի հայեցակարգային դրույթները և հիմնական ուղղությունները բխում են Երևանի հաստատված գլխավոր հատակագծի նախագծի հիմնական դրույթներից:

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագիծը մշակված է՝

- գոյություն ունեցող տարածքի սահմանների շրջանակում,
- տարածքային սկզբունքով, որի մեջ պարունակված է խնդիրների լուծման այլընտրականությունը՝ սեփականության բոլոր ձևերի նկատմամբ,
- տարածքի հողօգտագործման արդյունավետության բարձրացումը քաղաքի հատակագծային համակարգում,
- կայուն զարգացման սկզբունքներից ելնելով, պահպանելով սոցիալական, տնտեսական և էկոլոգիական ոլորտների պահանջների հաշվեկշիռը:

Նախագծի հիմնական խնդիրներն են՝

- հատակագծային կառուցվածքի բարելավումը, տարածական ամբողջականության և գործառույթների ռացիոնալ բաշխման ապահովումը,
- բնակելի պայմանների բարելավումը, բնակելի ֆոնդի հուսալիության և անվտանգության բարձրացումը,
- բնակչության սպասարկման համակարգի բարելավումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանումը,

- բնության ամբողջականության վերականգնումը, էկոլոգիական ռիսկի նվազեցումը,
- տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բարելավումը և դրանց շահագործման հուսալիության ու անվտանգության ապահովումը:

Սակայն, ելնելով դիտազննումներից և հողահատկացումների վերլուծությունից, և նպատակ ունենալով ապահովել տվյալ տարածքում գործառական նպատակահարմարություն, նախագծով առաջարկվել է.

- Գոյություն ունեցող բազմաբնակարան կառուցապատման վերակառուցում՝ կենտրոնական հատվածում: Ներկայումս այդ գոտին իրենից ներկայացնում է 4-5 հարկանի բնակելի շենքերով հատվածներ: Նուբարաշենի 6-րդ և 7-րդ փողոցների հատման կետում նախատեսել բազմաբնակարան կառուցապատման վերակառուցում՝ 9-12 հարկ բարձրությամբ:
- Նուբարաշենի հարավ-արևմտյան հատվածում գոյություն ունեցող 5-հարկանի կառուցապատմամբ թաղամասերը և հարակից տարածքները վերակառուցվում են բնակելի և հասարակական կառուցապատմամբ: Նախկինում մանկապարտեզի՝ ներկայումս որպես հանրային կառույց աշխատող գոտու գործառույթը վերականգնվում է: Վերականգնվում է դպրոցի մարզական գոտի՝ մարզադաշտը: Կենտրոնական հատվածում նախատեսվում է բազմաֆունկցիոնալ համալիր՝ նոր հանրային համակարգված գոտիով:
- Նուբարաշենի արևելյան մասում' Մ15 միջպետական ճանապարհի երկայնքով առաջարկվում է նոր բնակելի և խառը կառուցապատմամբ թաղամասեր՝ համապատասխան ենթակառուցվածքներով:
- Գերեզմանատան սանիտարապաշտպանկան գոտում ընդգրկված բնակելի կառուցապատման գոտին՝ փոխակերպվում է բուֆերային՝ ԲԳ1 գոտի, որի կառուցապատման կարգավիճակը հետագայում ենթակա է ճշտգրտման:

Սույն նախագծով նախագծային տարածքը բաժանվել է թաղամասերի՝ հաշվարկների ներկայացման դյուրինացման համար:

Յուրաքանչյուր թաղամասի համար առանձնացվել են հիմնական գործառույթը և հողօգտագործման հիմնական տեսակները:



Նկար 5.1.1 Գոտևորման նախագիծ. Կառուցապատման էքսիզ

Առանցքային դրույթներ են դարձել.

- Գլխավոր հատակագծի հաստատումից մինչ օրս ընկած ժամանակահատվածում իրականացված հողահատկացումների և կառուցապատված տարածքների ենթակառուցվածքային կազմակերպումը,
- Բակային տարածքների բարեկարգումն ու դրանց վերակազմավորումը՝ բակային ստորգետյա տարածքների յուրացմամբ և այնտեղ ավտոկայանատեղերի կազմակերպմամբ,
- Մանկական խաղահրապարակների կազմակերպումը,
- Հետիոտն անցուղիների կազմակերպումը,
- Կանաչապատ հանրային տարածքների ավելացումը՝ (կանաչապատ առաջարկվող մակերեսները կզբաղեցնեն մոտ 199.22 հա),
- Սպորտային հրապարակների նախատեսում՝ ներկայումս կառուցվող սքեյթ հրապարակի շուրջ առաջարկվում է զբոսայգի,
- Ճանապահափոխոցային ցանցի բարեկարգումը և առանցքային հատվածների կարմիր գծերի սահմանումը:

Դիտարկվող շրջանի համար նորովի շեշտադրվում են հետևյալ հատվածները.

Արտադրական գոտիների վերաբերյալ մասնակի գործառական հարակից տարածքում առաջարկվում է արտադրական գոտին փոխակերպել խառը կառուցապատմամբ գոտու:

Երևան քաղաքի մինչև 2020թ. Գլխավոր հատակագծով նախատեսված է կառուցել հասարակական զուգարաններ: Համաձայն վերոնշյալ նախագծի հասարակական զուգարաններ տեղաբաշխման ծրագրի և սխեմայի, Նուբարաշեն վարչական շրջանում ևս առաջարկվում է կառուցել հասարակական զուգարաններ: Դրանք առաջարկվում է նախատեսել նոր խառը կառուցապատման գոտիներում և ստորգետյա հատվածներում:

Նուբարաշեն համայնքի հողերի փաստացի օգտագործման հեռանկարային հաշվեկշիռը բերված է աղյուսակ 5.1.1.-ում:



Նկար 5.1.2 Գոտևորման նախագիծ. Հիմնական գծագիր



Նկար 5.1.3 Գոտևորման նախագիծ. Քաղաքաշինական միջոցառումների իրականացման փուլերի ուրվագիծ

Աղյուսակ 5.1.1

Նուբարաշեն համայնքի հողերի փաստացի օգտագործման հաշվեկշիռը (հեռանկարային)		
Նպատակային նշանակությունը	Հողատեսակ, գործառնական նշանակությունը	Նախագծային տարածք
1	2	3.
Գյուղատնտեսական նշանակության հողեր	վարելահող	0.00
	բազմամյա տնկարկներ, ընդամենը	212.31
	որից՝	
	պտղատու այգի	212.31
	խաղողի այգի	0.00
	արոտ	0.00
	այլ հողատեսքեր	177.73
	Ընդամենը	**390.05**
Կառուցապատման նշանակության հողեր	**բնակելի կառուցապատում**	143.99
	որից՝	
	անհատական կառուցապատում (մենատներ)	134.27
	բազմաբնակարան կառուցապատում	9.72
	ամառանոցներ	0.00
	հասարակական կառուցապատում	25.56
	որից՝	
	վարչական	0.16
	դպրոցներ և մանկապարտեզներ	6.43
	առևտրական և հասարակական սպասարկման	6.42
	բուժ-առողջական	10.22
	մարզական օբյեկտներ	0.91
	ուսումնական կրթական	1.26
	մշակութալուսավորչական	0.15
	խառը կառուցապատում	141.03
	ընդհանուր օգտագործման	259.19
	որից՝	
	ընդ. օգտագործման կանաչապատ տարածքներ	199.22
	փողոցներ, ճանապարհներ, հրապարակներ	59.98
	այլ հողեր	147.69
	որից՝	
	այլ հողեր	35.24
	բուֆեռային գոտի 1	31.77
	բուֆեռային գոտի 2	80.67
	Ընդամենը	**717.47**
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակ. օբյեկտների հողեր	արդյունաբերական	6.01
	գյուղատնտեսական արտադրական	183.72
	գիտա-արտադրական	0.00
	Ընդամենը	**189.74**
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և	**էներգետիկայի**	1.57
	կապի	4.92

կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	կոմունալ ենթակառուցվածքների	13.44
	որից՝	
	կոմունալ	5.31
	գերեզմանոցներ	8.13
	տրանսպորտի	0.00
	Ընդամենը	**19.93**
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	հատուկ պահպանվող տարածքների	0.00
	պատմական և մշակութային	0.00
	որից՝	
	պատմամշակութային	0.00
	Ընդամենը	**0.00**
Հատուկ նշան. հողեր	Ընդամենը	**404.24**
Անտառային հողեր	Ընդամենը	**0.00**
Ջրային հողեր	Ընդամենը	**2.55**
Պահուստային հողեր	Ընդամենը	**0.00**
Ընդամենը հողեր		**1724.00**

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ (ԴԱՍԻՉՆԵՐԸ) ԵՎ ԳԾԱԳՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Աղյուսակ 5.1.2

հապավումը և պայմանական նշանը գծագրում	Գործառնական գոտու անվանումը	Մակերեսը, հա
ԳՀ	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ	**390.05**
ԳՕԳ	Գյուղատնտեսական օգտագործման գոտի	
ԳՕԳ-1	Վարելահողեր	-
ԳՕԳ-2	Բազմամյա տնկարկներ	***212.31***
ԳՕԳ-2/1	Խաղողի այգի	-
ԳՕԳ-2/2	Պտղատու այգի	212.31
ԳՕԳ-3	Խոտհարքներ	-
ԳՕԳ-4	Արոտավայրեր	-
ԳՕԳ-0	Այլ հողատեսքեր	***177.73***
ԲՆՀ	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	**717.47**
ԲՆԿԳ	Բնակելի կառուցապատման գոտի	***143.99***
ԲՆԿԳ-1/1	Սակավահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) (*)	134.27
ԲՆԿԳ-1/2	Սակավահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի), բլոկացված տներով կառուցապատում	-
ԲՆԿԳ-2	Ամառանոցային կառուցապատման գոտի	-
ԲՆԿԳ-3	Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի (*)	5.51
ԲՆԿԳ-4	Բազմահարկ բնակելի կառուցապատման գոտի (*)	4.21
ՀԿԳ	Հասարակական կառուցապատման գոտի	***25.56***
ՀԿԳ-1	Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի	-
ՀԿԳ-1/1	Վարչական օբյեկտների գոտի	0.16

ՀԿԳ-1/2	Մշակութային և ժամանցային օբյեկտների գոտի	0.15
ՀԿԳ-1/3	Կրթական գոտի	7.69
ՀԿԳ-1/4	Բուժական հաստատությունների գոտի	10.22
ՀԿԳ-1/5	Սպորտային օբյեկտների գոտի	0.91
ՀԿԳ-2	Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի	4.97
ՀԿԳ-3	Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի	1.45
ԽԿԳ	**Խառը կառուցապատման գոտի**	***141.03***
ԽԿԳ-1	Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական)	103.43
ԽԿԳ-2	Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտ.)	37.6
ԸՕԳ	**Ընդհանուր օգտագործման գոտի**	***259.19***
ԸՕԳ-1	Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ	59.98
ԸՕԳ-2	Զբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ	199.22
ԲՆՌԳ	**Այլ հողեր**	***35.24***
ԲՆՌԳ	Բնակավայրի ռեզերվային (պահուստային) և անօգտագործելի հողեր (այն տարածքները, որոնց համար տվյալ գոտևորման նախագծով որոշակի գործառնական նշանակություն սահմանված չէ)	35.24
(*)	*Սակավահարկ՝ մինչև 4 հարկ* *Միջին հարկայնության՝ 4-ից 9-ը հարկայնությամբ* *Բազմահարկ՝ 9-ից բարձր հարկայնությամբ*	
ԱՀ	**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ**	**189.74**
ԱԳ-1	**Արդյունաբերական օբյեկտների գոտի**	***6.01***
ԱԳ-1/1	Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի	-
ԱԳ-1/2	Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի	6.01
ԱԳ-2	**Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի**	***183.72***
ԱԳ-2/1	Անասնապահական օբյեկտներ	183.72
ԱԳ-2/2	Սպանդանոցներ	-
ԱԳ-2/3	Գյուղատնտեսական մթերքի վերամշակման գործարաններ, արտադրամասեր	-
ԱԳ-2/4	Ջերմոցներ	0.40
ԱԳ-2/5	Ձկնաբուծարաններ	-
ԱԳ-3	**Պահեստարանների գոտի**	-
ԱԳ-4	**Ընդերքօգտագործման գոտի**	-
ԵՆԹՀ	**ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ**	**19.95**
ԵՆԹԳ -1	**Էներգետիկայի օբյեկտների գոտի(*)**	***1.57***
ԷՆՐԳ -1/1	Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի	0.59
ԷՆՐԳ -1/2	Գազամատակարարման օբյեկտների գոտի	0.98
ԵՆԹԳ -2	**Կապի օբյեկտների գոտի (*)**	***4.92***
ԵՆԹԳ -3	**Տրանսպորտի օբյեկտների գոտի**	-
ԵՆԹԳ-4	**Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի (*)**	***13.45***
ԵՆԹԳ -4/1	Ջրամատակարարման, ջրահեռացման ենթակառուցվածքների օբյեկտներ	5.31

(*) Էներգետիկայի, կապի, կոմունալ տնտեսության օբյեկտների գոտիներ առանձնացվում են կետային օբյեկտների համար, գծային օբյեկտները անցկացվում են այլ գոտիների տարածքներով՝ սերվիտուտի իրավունքով		
ԵՆԹԳ -4/2	Աղբավայրերի գոտի	-
ԵՆԹԳ -4/3	Համայնքային և մասնավոր գերեզմանատների գոտի	8.13
ՀՊՏՀ	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	-
ՀՊՏ-1/բնպ	Բնապահպանական գոտի	-
ՀՊՏ-1/1-բնպ	ազգային պարկեր	-
ՀՊՏ-1/2-բնպ	բուսաբանական և ծառաբանական այգիներ	-
ՀՊՏ-1/3-բնպ	պետական արգելավայրեր և արգելոցներ	-
ՀՊՏ-1/4-բնպ	բնության հուշարձաններ	-
ՀՊՏ-2/առջ	Առողջարարական նպատակներով նախատեսված գոտի	-
ՀՊՏ-3/հնգ	Հանգստի համար նախատեսված գոտի	-
ՊՄՀԳ-4/պմհ (N….)*	Պատմական և մշակութային հողերի գոտի	-
ՀՊՏ-5/պմգ (N….)*	Պետական գերեզմանատների գոտի	-
ՀՆՀ	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	404.24
ՀՆԳ	Հատուկ նշանակության գոտի	*404.24*
ԱՆՏՀ	ԱՆՏԱՌԱՅԻՆ	-
ԱՆՏԳ-1/1	Պաշտպանական նշանակության անտառների գոտի	-
	Հատուկ նշանակության անտառների գոտի	-
	Արտադրական նշանակության անտառների գոտի	-
ԱՆՏԳ-2	Վարելահողեր	-
ԱՆՏԳ-3	Խոտհարք	-
ԱՆՏԳ-4	Արոտ	-
ԱՆՏԳ-5	Թփուտ	-
ԱՆՏԳ-6	Այլ հողեր	-
ՋՀ	ՋՐԱՅԻՆ	2.55
ՋԳ-1	Ջրանցքներ	*1.20*
ՋԳ-2	Գետեր, գետակներ	-
ՋԳ-3	Լճեր	-
ՋԳ-4	Հիդրոտեխնիկական կառույցներ	-
ՋԳ-5	Ջրամբարներ	*1.35*
ՊՀՍՏՀ	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ	-
ՊՀՍՏԳ	Պահուստային գոտի	-

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)

Աղյուսակ 5.1.3

Հողամաս ի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում Փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Գյուղատնտեսական հողերից			

ԳԲ			Բնակավայրերի	
ԳԲ.1	Այլ հողատեսքեր	1.588	Խառը կառուցապատման	1.588
ԳԲ.2	Այլ հողատեսքեր	1.756	Խառը կառուցապատման	1.756
ԳԲ.3	Այլ հողատեսքեր	3.311	Հասարակ.նշանակ.կանաչապատում	3.311
ԳԲ.4	Այլ հողատեսքեր	5.412	Հասարակ.նշանակ.կանաչապատում	5.412
ԳԲ.5	Այլ հողատեսքեր	3.456	Բուֆերային գոտի-2	3.456
ԳԲ.6	Այլ հողատեսքեր	0.409	Բուֆերային գոտի-2	0.409
ԳԲ.7	Այլ հողատեսքեր	1.242	Բուֆերային գոտի-2	1.242
ԳԲ.8	Այլ հողատեսքեր	1.823	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.823
ԳԲ.9	Այլ հողատեսքեր	1.431	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.431
ԳԲ.10	Այլ հողատեսքեր	0.262	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.262
ԳԲ.11	Այլ հողատեսքեր	1.05	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.05
ԳԲ.12	Այլ հողատեսքեր	0.571	Խառը կառուցապատման	0.571
ԳԲ.13	Այլ հողատեսքեր	0.554	Խառը կառուցապատման	0.554
ԳԲ.14	Այլ հողատեսքեր	0.599	Խառը կառուցապատման	0.599
ԳԲ.15	Այլ հողատեսքեր	0.554	Խառը կառուցապատման	0.554
ԳԲ.16	Այլ հողատեսքեր	0.554	Խառը կառուցապատման	0.554
ԳԲ. 17	Այլ հողատեսքեր	0.223	Խառը կառուցապատման	0.223
ԳԲ.18	Այլ հողատեսքեր	0.325	Խառը կառուցապատման	0.325
ԳԲ.19	Այլ հողատեսքեր	0.156	Խառը կառուցապատման	0.156
ԳԲ.20	Այլ հողատեսքեր	1.365	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	1.365
ԳԲ.51	Այլ հողատեսքեր	2.422	Բուֆերային գոտի-2	2.422
ԳԲ.54	Այլ հողատեսքեր	14.984	Հասարակ.նշանակ.կանաչապատում	14.984
ԳԲ.55	Այլ հողատեսքեր	2.953	Հասարակ.նշանակ.կանաչապատում	2.953
ԳԲ.56	Այլ հողատեսքեր	0.167	Հասարակական	0.167
ԳԲ.57	Այլ հողատեսքեր	0.033	Հասարակական	0.033
ԲԳ	Բնակավայրերի հողերից			
			Գյուղատնտեսական	
ԲԳ.4	Բնակ. այլ	1.05	Այգիներ	1.05
ԲԳ.5	Բնակ. այլ	1.178	Այգիներ	1.178
ԲԳ.6	Բնակ. այլ	1.964	Այգիներ	1.964
ԲԳ.7	Բնակ. այլ	1.224	Այգիներ	1.224
ԲԳ.8	Բնակ. այլ	1.697	Այգիներ	1.697
ԲԲ			Բնակավայրերի	
ԲԲ.2	Բնակ. այլ	0.538	Սակավահարկ բնակ.	0.538
ԲԲ.5	Բնակ. այլ	0.388	Հասարակ, նշանակ 0կանաչապատում	0.388
ԲԲ.6	Բնակ. այլ	0.105	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.105
ԲԲ.8	Բնակ. այլ	0.585	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.585
ԲԲ.10	Բնակ. այլ	0.146	Սակավահարկ բնակ.	0.146
ԲԲ.18	Բնակ. այլ	4.174	Խառը կառուցապատման	4.174
ԲԲ.19	Բնակ. այլ	0.759	Խառը կառուցապատման	0.759
ԲԲ.20	Բնակ. այլ	0.682	Խառը կառուցապատման	0.682
ԲԲ.21	Բնակ. այլ	0.494	Խառը կառուցապատման	0.494
ԲԲ.22	Բնակ. այլ	0.498	Խառը կառուցապատման	0.498
ԲԲ.23	Բնակ. այլ	0.952	Խառը կառուցապատման	0.952

ԲԲ.31	Բնակ. այլ	0.369	Սակավահարկ բնակ	0.369
ԲԲ.32	Բնակ. այլ	0.203	Սակավահարկ բնակ	0.203
ԲԲ.33	Բնակ. այլ	0.295	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.295
ԲԲ.41	Բնակ. այլ	0.944	Սակավահարկ բնակ	0.944
ԲԲ.42	Բնակ. այլ	0.313	Սակավահարկ բնակ.	0.313
ԲԲ.43	Բնակ. այլ	0.383	Սակավահարկ բնակ.	0.383
ԲԲ.44	Բնակ. այլ	0.066	Սակավահարկ բնակ.	0.066
ԲԲ.45	Բնակ. այլ	0.651	Սակավահարկ բնակ.	0.651
ԲԲ.46	Բնակ. այլ	12.114	Հասարակ.նշանակ.կանաչապատում	12.114
ԲԲ.47	Բնակ. այլ	0.857	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.857
ԲԲ.51	Բնակ. այլ	0.329	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.329
ԲԲ.52	Բնակ. այլ	0.316	Հասարակական	0.316
ԲԲ.54	Բնակ. այլ	0.766	Սակավահարկ բնակ.	0.766
ԲԲ.55	Բնակ. այլ	0.422	Սակավահարկ բնակ.	0.422
ԲԲ.57	Բնակ. այլ	0.923	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.923
ԲԲ.58	Բնակ. այլ	0.051	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.051
ԲԲ.59	Բնակ. այլ	0.359	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.359
ԲԲ.60	Բնակ. այլ	1.16	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.16
ԲԲ.61	Բնակ. այլ	0.624	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.624
ԲԲ.64	Բնակ. այլ	0.591	Խառը կառուցապատման	0.591
ԲԲ.66	Բնակ. այլ	0.083	Բուֆերային գոտի-2	0.083
ԲԲ.67	Բնակ. այլ	1.29	Բուֆերային գոտի-2	1.29
ԲԲ.68	Բնակ. այլ	0.018	Բուֆերային գոտի-2	0.018
ԲԲ.69	Բնակ. այլ	9.459	Բուֆերային գոտի-2	9.459
ԲԲ.70	Բնակ. այլ	3.909	Բուֆերային գոտի-2	3.909
ԲԲ.74	Խառը կառուցապատ:	0.128	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.128
ԲԲ.75	Խառը կառուցապատ:	0.632	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.632
ԲԲ.76	Խառը կառուցապատ:	0.441	Սակավահարկ բնակ.	0.441
ԲԲ.77	Խառը կառուցապատ:	0.267	Սակավահարկ բնակ.	0.267
ԲԲ.78	Խառը կառուցապատ:	0.098	Հասարակական	0.098
ԲԲ.79	Խառը կառուցապատ:	0.358	Հասարակական	0.358
ԲԲ.80	Խառը կառուցապատ:	0.366	Հասարակական	0.366
ԲԲ.81	Խառը կառուցապատ:	0.052	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.052
ԲԲ.82	Խառը կառուցապատ:	0.131	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.131
ԲԲ.83	Խառը կառուցապատ:	0.264	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.264
ԲԲ.84	Խառը կառուցապատ:	0.907	Հասարակական (մանկապարտեզ)	0.907
ԲԲ.86	Խառը կառուցապատ:	0.102	Հասարակական	0.102
ԲԲ.88	Խառը կառուցապատ:	0.07	Սակավահարկ բնակ.	0.07
ԲԲ.89	Խառը կառուցապատ:	1.471	Սակավահարկ բնակ.	1.471
ԲԲ.90	Խառը կառուցապատ:	0.054	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.054
ԲԲ.91	Խառը կառուցապատ:	0.56	Սակավահարկ բնակ.	0.56
ԲԲ. 134	Սակավահարկ բնակ.	0.515	Խառը կառուցապատման	0.515
ԲԲ. 135	Սակավահարկ բնակ.	1.818	Խառը կառուցապատման	1.818
ԲԲ. 136	Սակավահարկ բնակ.	1.531	Խառը կառուցապատման	1.531
ԲԲ. 137	Սակավահարկ բնակ.	0.315	Խառը կառուցապատման	0.315
ԲԲ. 152	Սակավահարկ բնակ.	0.041	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.041

ԲԲ. 153	Սակավահարկ բնակ.	0.773	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.773
ԲԲ. 154	Սակավահարկ բնակ.	0.343	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.343
ԲԲ. 155	Սակավահարկ բնակ.	0.225	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.225
ԲԲ. 156	Սակավահարկ բնակ.	0.238	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.238
ԲԲ. 157	Սակավահարկ բնակ.	2.423	Խառը կառուցապատման	2.423
ԲԲ. 158	Սակավահարկ բնակ.	0.368	Խառը կառուցապատման	0.368
ԲԲ. 161	Սակավահարկ բնակ.	0.073	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.073
ԲԲ. 162	Սակավահարկ բնակ.	0.075	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.075
ԲԲ. 163	Սակավահարկ բնակ.	0.115	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.115
ԲԲ. 164	Սակավահարկ բնակ.	0.13	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.13
ԲԲ. 165	Սակավահարկ բնակ.	0.119	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.119
ԲԲ. 166	Սակավահարկ բնակ.	0.047	Խառը կառուցապատման	0.047
ԲԲ. 167	Սակավահարկ բնակ.	0.031	Խառը կառուցապատման	0.031
ԲԲ. 168	Սակավահարկ բնակ.	0.05	Խառը կառուցապատման	0.05
ԲԲ. 169	Սակավահարկ բնակ.	0.048	Խառը կառուցապատման	0.048
ԲԲ. 178	Սակավահարկ բնակ.	0.155	Խառը կառուցապատման	0.155
ԲԲ. 183	Սակավահարկ բնակ.	0.124	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.124
ԲԲ. 184	Սակավահարկ բնակ.	8.559	Խառը կառուցապատման	8.559
ԲԲ. 185	Միջ.հարկ. բնակ.	1.435	Խառը կառուցապատման	1.435
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության			
ԱԲ			Բնակավայրերի	
ԱԲ.1	Արդյունաբերության	0.619	Խառը կառուցապատման	0.619
ԱԲ.4	Արդյունաբերության	4.244	Խառը կառուցապատման	4.244

Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)

Աղյուսակ 5.1.4

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Գյուղատնտեսական հողերից			
ԳԲ			Բնակավայրերի	
ԳԲ.21	Այլ հողատեսքեր	0.37	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.37
ԳԲ.44	Այլ հողատեսքեր	0.305	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.305
ԳԲ.45	Այլ հողատեսքեր	0.514	Հասարակական	0.514
ԳԲ.50	Այլ հողատեսքեր	0.398	Սակավահարկ բնակ.	0.398
ԳԲ.53	Այլ հողատեսքեր	8.943	Հասարակ.նշանակ.կանաչապատում	8.943
ԲԲ	Բնակավայրերի հողերից			
			Բնակավայրերի	
ԲԲ.1	Բնակ. այլ	1.533	Սակավահարկ բնակ.	1.533

ԲԲ.3	Բնակ. այլ	1.631	Խառը կառուցապատման	1.631
ԲԲ.4	Բնակ. այլ	7.939	Հասարակ.նշանակ.կանաչապատում	7.939
ԲԲ.7	Բնակ. այլ	10.481	Հասարակ.նշանակ.կանաչապատում	10.481
ԲԲ.9	Բնակ. այլ	3.234	Հասարակ.նշանակ.կանաչապատում	3.234
ԲԲ.11	Բնակ. այլ	0.147	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.147
ԲԲ.12	Բնակ. այլ	0.959	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.959
ԲԲ.13	Բնակ. այլ	11.93	Հասարակ.նշանակ.կանաչապատում	11.93
ԲԲ.14	Բնակ. այլ	9.784	Հասարակ.նշանակ.կանաչապատում	9.784
ԲԲ.15	Բնակ. այլ	4.094	Հասարակ.նշանակ.կանաչապատում	4.094
ԲԲ.16	Բնակ. այլ	4.159	Հասարակ.նշանակ.կանաչապատում	4.159
ԲԲ.24	Բնակ. այլ	0.864	Խառը կառուցապատման	0.864
ԲԲ.25	Բնակ. այլ	0.393	Խառը կառուցապատման	0.393
ԲԲ.26	Բնակ. այլ	0.543	Խառը կառուցապատման	0.543
ԲԲ.27	Բնակ. այլ	0.728	Խառը կառուցապատման	0.728
ԲԲ.28	Բնակ. այլ	0.554	Խառը կառուցապատման	0.554
ԲԲ.29	Բնակ. այլ	0.667	Խառը կառուցապատման	0.667
ԲԲ.30	Բնակ. այլ	5.901	Հասարակ.նշանակ.կանաչապատում	5.901
ԲԲ.34	Բնակ. այլ	0.119	Խառը կառուցապատման	0.119
ԲԲ.35	Բնակ. այլ	0.377	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.377
ԲԲ.36	Բնակ. այլ	0.257	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.257
ԲԲ.48	Բնակ. այլ	3.765	Հասարակ.նշանակ.կանաչապատում	3.765
ԲԲ.49	Բնակ. այլ	1.206	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.206
ԲԲ.53	Բնակ. այլ	2.605	Հասարակ.նշանակ.կանաչապատում	2.605
ԲԲ.56	Բնակ. այլ	0.599	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.599
ԲԲ.62	Բնակ. այլ	0.873	Խառը կառուցապատման	0.873
ԲԲ.63	Բնակ. այլ	1.328	Խառը կառուցապատման	1.328
ԲԲ.72	Խառը կառուցապատ:	1.056	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.056
ԲԲ.73	Խառը կառուցապատ:	0.454	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.454
ԲԲ.87	Խառը կառուցապատ:	0.137	Հասարակական	0.137
ԲԲ. 138	Սակավահարկ բնակ.	0.182	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.182
ԲԲ. 139	Սակավահարկ բնակ.	0.262	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.262
ԲԲ. 140	Սակավահարկ բնակ.	0.452	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.452
ԲԲ. 141	Սակավահարկ բնակ.	0.126	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.126
ԲԲ. 142	Սակավահարկ բնակ.	1.709	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	1.709
ԲԲ. 143	Սակավահարկ բնակ.	0.249	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.249
ԲԲ. 150	Սակավահարկ բնակ.	0.758	Բուֆերային գոտի-1	0.758
ԲԲ. 151	Սակավահարկ բնակ.	0.376	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.376
ԲԲ. 171	Սակավահարկ բնակ.	0.332	Բուֆերային գոտի-1	0.332
ԲԲ. 172	Սակավահարկ բնակ.	0.462	Բուֆերային գոտի-1	0.462
ԲԲ. 173	Սակավահարկ բնակ.	0.611	Բուֆերային գոտի-1	0.611
ԲԲ. 174	Սակավահարկ բնակ.	0.204	Բուֆերային գոտի-1	0.204
ԲԲ. 175	Սակավահարկ բնակ.	0.29	Խառը կառուցապատման	0.29
ԲԲ. 177	Սակավահարկ բնակ.	0.347	Խառը կառուցապատման	0.347
ԲԲ. 179	Սակավահարկ բնակ.	0.097	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.097

	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից			
ԱԲ			Բնակավայրերի	
ԱԲ.3	*Արդյունաբերության*	*4.418*	*Խառը կառուցապատման*	*4.418*

Երկարաժամկետ միջոցառումներ (10-15 տարի)

Աղյուսակ 5.1.5

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Գյուղատնտեսական հողերից			
ԳԲ			Բնակավայրերի	
ԳԲ.22	*Այլ հողատեսքեր*	*0.886*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.886*
ԳԲ.23	*Այլ հողատեսքեր*	*1.493*	*Խառը կառուցապատման*	*1.493*
ԳԲ.24	*Այլ հողատեսքեր*	*0.636*	*Խառը կառուցապատման*	*0.636*
ԳԲ.25	*Այլ հողատեսքեր*	*2.733*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*2.733*
ԳԲ.26	*Այլ հողատեսքեր*	*3.754*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*3.754*
ԳԲ.27	*Այլ հողատեսքեր*	*0.305*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.305*
ԳԲ.28	*Այլ հողատեսքեր*	*0.531*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.531*
ԳԲ.29	*Այլ հողատեսքեր*	*0.483*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.483*
ԳԲ.30	*Այլ հողատեսքեր*	*1.952*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*1.952*
ԳԲ.31	*Այլ հողատեսքեր*	*0.437*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.437*
ԳԲ.32	*Այլ հողատեսքեր*	*0.965*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.965*
ԳԲ.33	*Այլ հողատեսքեր*	*0.384*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.384*
ԳԲ.34	*Այլ հողատեսքեր*	*0.531*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.531*
ԳԲ.35	*Այլ հողատեսքեր*	*0.247*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*0.247*
ԳԲ.36	*Այլ հողատեսքեր*	*1.268*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*1.268*
ԳԲ.37	*Այլ հողատեսքեր*	*1.625*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*1.625*
ԳԲ.38	*Այլ հողատեսքեր*	*19.861*	*Հասարակ.նշանակ.կանաչապատում*	*19.861*
ԳԲ.39	*Այլ հողատեսքեր*	*0.403*	*Ընդհ.օգտագործման (ճանապարհ)*	*0.403*
ԳԲ.40	*Այլ հողատեսքեր*	*0.085*	*Ընդհ.օգտագործման (ճանապարհ)*	*0.085*
ԳԲ.41	*Այլ հողատեսքեր*	*0.116*	*Ընդհ.օգտագործման (ճանապարհ)*	*0.116*
ԳԲ.42	*Այլ հողատեսքեր*	*0.069*	*Ընդհ.օգտագործման (ճանապարհ)*	*0.069*
ԳԲ.43	*Այլ հողատեսքեր*	*0.089*	*Ընդհ.օգտագործման (ճանապարհ)*	*0.089*
ԳԲ.46	*Այլ հողատեսքեր*	*0.315*	*Հասարակական*	*0.315*
ԳԲ.47	*Այլ հողատեսքեր*	*0.398*	*Հասարակական*	*0.398*
ԳԲ.48	*Այլ հողատեսքեր*	*0.174*	*Հասարակական (դպրոց)*	*0.174*
ԳԲ.49	*Այլ հողատեսքեր*	*0.092*	*Հասարակական*	*0.092*

ԲԳ	Բնակավայրերի հողերից			
			Բնակավայրերի	
ԲԳ.1	Բնակելի անհատակ:	0.177	Այլ հողատեսքեր	0.177
ԲԳ.2	Բնակելի անհատակ:	0.097	Այլ հողատեսքեր	0.097
ԲԳ.3	Բնակելի անհատակ:	1.451	Այլ հողատեսքեր	1.451
ԲԲ	Բնակավայրերի հողերից			
			Բնակավայրերի	
ԲԲ. 17	Բնակ. այլ	2.7	Խառը կառուցապատման	2.7
ԲԲ.37	Բնակ. այլ	0.286	Խառը կառուցապատման	0.286
ԲԲ.38	Բնակ. այլ	0.155	Խառը կառուցապատման	0.155
ԲԲ.71	Խառը կառուցապատ.	0.376	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.376
ԲԲ.92	Խառը կառուցապատ.	0.641	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.641
ԲԲ.93	Խառը կառուցապատ.	0.34	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.34
ԲԲ.94	Խառը կառուցապատ.	1.091	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.091
ԲԲ.95	Խառը կառուցապատ.	0.475	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.475
ԲԲ.96	Խառը կառուցապատ.	0.851	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.851
ԲԲ.97	Խառը կառուցապատ.	14.132	Հասարակ.նշանակ.կանաչապատում	14.132
ԲԲ.98	Խառը կառուցապատ.	0.173	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.173
ԲԲ.99	Խառը կառուցապատ.	0.173	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.173
ԲԲ. 100	Խառը կառուցապատ.	0.733	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.733
ԲԲ. 101	Խառը կառուցապատ.	0.74	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.74
ԲԲ. 102	Խառը կառուցապատ.	0.112	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.112
ԲԲ. 103	Խառը կառուցապատ.	0.245	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.245
ԲԲ. 104	Խառը կառուցապատ.	0.078	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.078
ԲԲ. 105	Խառը կառուցապատ.	0.144	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.144
ԲԲ. 106	Խառը կառուցապատ.	0.171	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.171
ԲԲ. 107	Խառը կառուցապատ.	0.179	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.179
ԲԲ. 108	Խառը կառուցապատ.	0.143	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.143
ԲԲ. 109	Խառը կառուցապատ.	0.222	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.222
ԲԲ.110	Խառը կառուցապատ.	0.772	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.772
ԲԲ.111	Խառը կառուցապատ.	1.569	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.569
ԲԲ.112	Խառը կառուցապատ.	1.028	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.028
ԲԲ.113	Խառը կառուցապատ.	0.335	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.335
ԲԲ.114	Խառը կառուցապատ.	1.254	Հասարակ.նշանակ.կանաչապատում	1.254
ԲԲ.115	Խառը կառուցապատ.	0.469	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.469
ԲԲ.116	Խառը կառուցապատ.	0.072	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.072
ԲԲ.117	Խառը կառուցապատ.	0.586	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.586
ԲԲ.118	Խառը կառուցապատ.	0.238	Հասարակ.նշանակ.կանաչապատում	0.238
ԲԲ.119	Խառը կառուցապատ.	0.953	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	0.953
ԲԲ. 120	Խառը կառուցապատ.	1.202	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	1.202
ԲԲ. 121	Խառը կառուցապատ.	1.475	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	1.475
ԲԲ. 122	Խառը կառուցապատ.	2.277	Ընդհ.օգտագործման (ճանապարհ)	2.277
ԲԲ. 123	Խառը կառուցապատ.	1.137	Հասարակական	1.137
ԲԲ. 124	Խառը կառուցապատ.	0.244	Հասարակական	0.244

ԲԲ. 125	*Խառը կառուցապատ.*	*1.032*	*Հասարակական (դպրոց)*	*1.032*
ԲԲ. 144	*Սակավահարկ բնակ.*	*0.706*	*Բուֆերային գոտի-1*	*0.706*
ԲԲ. 145	*Սակավահարկ բնակ.*	*7.823*	*Բուֆերային գոտի-1*	*7.823*
ԲԲ. 146	*Սակավահարկ բնակ.*	*3.191*	*Բուֆերային գոտի-1*	*3.191*
ԲԲ. 147	*Սակավահարկ բնակ.*	*0.138*	*Բուֆերային գոտի-1*	*0.138*
ԲԲ. 148	*Սակավահարկ բնակ.*	*1.075*	*Բուֆերային գոտի-1*	*1.075*
ԲԲ. 149	*Սակավահարկ բնակ.*	*4.154*	*Բուֆերային գոտի-1*	*4.154*
ԲԲ. 176	*Սակավահարկ բնակ.*	*0.059*	*Խառը կառուցապատման*	*0.059*
ԲԲ. 180	*Սակավահարկ բնակ.*	*7.412*	*Բուֆերային գոտի-1*	*7.412*
ԲԲ.181	*Սակավահարկ բնակ.*	*3.251*	*Բուֆերային գոտի-1*	*3.251*
ԲԲ. 182	*Սակավահարկ բնակ.*	*0.317*	*Բուֆերային գոտի-1*	*0.317*
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության			
ԱԲ			Բնակավայրերի	
ԱԲ.2	*Արդյունաբերության*	*1.279*	*Խառը կառուցապատման*	*1.279*

Հաշվարկային ժամկետից դուրս քաղաքաշինական միջոցառումներ

Աղյուսակ 5.1.6

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Գյուղատնտեսական հողերից			
ԳԲ			Բնակավայրերի	
ԳԲ.52	*Այլ հողատեսքեր*	*38.358*	*Բուֆերային գոտի-2*	*38.358*
ԲԳ	Բնակավայրերի հողերից			
			Բնակավայրերի	
ԲԲ.39	*Բնակ. այլ*	*6.975*	*Բուֆերային գոտի-2*	*6.975*
ԲԲ.40	*Բնակ. այլ*	*5.005*	*Բուֆերային գոտի-2*	*5.005*
ԲԲ.50	*Բնակ. այլ*	*7.567*	*Բուֆերային գոտի-2*	*7.567*
ԲԲ. 159	*Սակավահարկ բնակ.*	*1.17*	*Բուֆերային գոտի-1*	*1.17*
ԲԲ. 160	*Սակավահարկ բնակ.*	*0.119*	*Բուֆերային գոտի-1*	*0.119*
ԲԲ. 170	*Սակավահարկ բնակ.*	*0.048*	*Բուֆերային գոտի-1*	*0.048*



Նկար 5.1.4 Գոտևորման նախագիծ. Տարածքի բաժանում թաղամասերի



Նկար 5.1.5 Գոտևորման նախագիծ. Հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ

5.2 Բնաէկոլոգիական և սանիտարահիգիենիկ սահմանափակումների համակարգը

Նուբարաշեն համայնքի գոտիավորման նախագծում սանիտարա-պաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերը ընդունված են համաձայն ՍՆ և Կ 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաները:

- ✓ Էլեկտրաենթակայանների ՍՊԳ-ի չափերը ընդունված է 10մ:
- ✓ Էլեկտրահաղորդման գծերի ՍՊԳ-ի չափերը ընդունված է 10մ:

  **- գետնի վրա եզրային լարերի պրոեկցիայի հեռավորությունը:*
- ✓ Մայրուղային գազատար խողովակաշարերի ՍՊԳ-ի չափերը ընդունված է 20մ:
- ✓ Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:
- ✓ Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:
- ✓ Արտադրական օբյեկտների ՍՊԳ-ի չափերը ընդունված են 300 մ:
- ✓ Խոզաբուծական և թռչնաբուծական ֆաբրիկաների համար ՍՊԳ-ի չափերը ընդունված են 300 մ:
- ✓ Ռադիոկենտրոնի համար ՍՊԳ-ի չափերը ընդունված են 120 մ:

Նուբարաշեն համայնքի գոտիավորման նախագծով նախատեսվող սանիտարա-պաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերի, ինչպես նաև հողերի փաստացի օգտագործման հեռանկարային հաշվեկշիռի ուրվագծերը ներկայացված են նկար 5.2.1-ում:

Ինչպես երևում է նկար 5.2.1-ից, Նուբարաշեն համայնքի գոտիավորման նախագծով առաջարկվում է կազմակերպել երկու բուֆեռային գոտի.

- ➢ Բուֆեռային գոտի 1 (բնակելի և հասարակական կառուցապատման տարածքներ, որոնց կարգավիճակը ենթակա է հետագա ճշգրտման) - 31.77 հա ընդհանուր մակերեսով:
- ➢ Բուֆեռային գոտի 2 (արդյունաբերական, կոմունալ օբյեկտների, գերեզմանոցների շուրջ սանիտարապաշտպանիչ կանաչ գոտի) - 80.67 հա ընդհանուր մակերեսով:



Նկար 5.2.1 Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Ռիսկերի և սահմանափակումների ուրվագիծ

5.3. Լանդշաֆտի պահպանման գոտիները

Լանդշաֆտի պահպանման գոտիների սահմանումը նպատակ ունի բնական կամ արհեստական ռելիեֆի և դրա լանդշաֆտի պատմական տեսքի պահպանումը կամ վերականգնումը:

Այդ գոտիների պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ է լանդշաֆտն աղճատող շինությունների վերացումը կամ դրանց փոփոխումը ոռոգման ջրի ցանցերի, նոր տնկիների և հողի բուսական շերտի, ինչպես նաև նախկինում գոյություն ունեցող արահետների և այլ բարեկարգված տարածքների վերականգնումը:

Հուշարձանների պահպանման և տեսողական ընկալման ապահովման համար անհրաժեշտ է վերացնել կամ պարբերաբար կատարել ծառերի հատումները:

Նուբարաշենի տարածքը երբեք առատ կանաչապատ զանգվածներով չի առանձնացել: Սակայն, հաշվի առնելով նորմատիվ պահանջները, ինչպես նաև արդի քաղաքաշինական միտումները, անհրաժեշտ է իրականացնել կանաչապատման ծրագրերը՝ հաշվի առնելով լիազորված մարմնի մասնագիտական եզրակացությունը:

Լանդշաֆտի պահպանական գոտիներում թույլատրվում է իրականացնել տնտեսական գործունեություն, որը կապված է այդ տարածքների նպատակային օգտագործման հետ և չի վնասի ընդհանուր տարածքի հորինվածքին և չի խոչընդոտի հուշարձանների կամ պատմական միջավայրի ընկալմանը:

Նախագծում բնական կամ արհեստական լանդշաֆտի պահպանության գոտիների սահմանումը նպատակ ունի պահպանել պատմական բնակավայրերի քաղաքաշինական հորինվածքի կամ հուշարձանների բնապատմական արժեքավոր լանդշաֆտը:

Ելնելով պատմական բնակավայրի պահպանման ճարտարապետա-քաղաքաշինական և ծավալատարածական շահերից՝ այդ գոտիներում անհրաժեշտ է պահպանել գոյություն ունեցող պատմականորեն ձևավորված փողոցային ցանցը:

Վերակառուցման ենթակա և նորակառույց տների բարձրությունը հողամասի նկատմամբ սահմանել մինչև 10.0 մետր:

Բնակավայրի արժեքավոր տարրերի ամբողջական ընկալման նպատակով նախատեսել խոչընդոտող և արժեք չներկայացնող շինությունների և այլ կառույցների կամ դրանց առանձին հատվածների հետագա աստիճանական վերացում:

Բնակավայրերի կառուցապատման կարգավորման գոտիների տարածքներում չի թույլատրվում արդյունաբերական, պահեստային, ավտոսպասարկման և այլ ձեռնարկությունների կառուցում կամ դրանց կազմակերպումը գոյություն ունեցող շինություններում, որոնք կարող են առաջացնել օդի աղտոտումը և ստեղծել պայթունավտանգ ու հրդեհավտանգ վիճակ:

Հաշվի առնելով այդ պատմական բնակավայրերի ձևավորված փողոցային ցանցերի հատակագծային հորինվածքը և հնարավորությունները, ինչպես նաև գոյություն ունեցող շինությունների ֆիզիկական վիճակը՝ անհրաժեշտ է կատարել տրանսպորտային հոսքի կազմակերպում և բեռնաթափում, արգելել բեռնատար մեքենաների մուտքը:

6. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՑ

Տվյալ բաժնի դրույթները սահմանված են համաձայն հաստատված Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի նախագծի: Համաձայն նշված աշխատանքի, տվյալ հատվածների համար տարերային (բնածին) վտանգավոր երևույթների առաջացումը, զարգացումը և համապատասխան սպառնալիքները պայմանավորված են տվյալ տարածքի ռելիեֆի բնույթով, երկրաբանալիթոլոգիական առանձնահատկություններով, հիդրոերկրաբանական պայմաններով, ինչպես նաև անտրոպոգեն (տեխնածին) տարբեր հանգամանքներով՝ անկանոն հողհանումներ, ռելիեֆի, հատկապես թեք լանջերի կտրվածքներ, գրունտների արհեստական ջրհագեցումներ, անհաշվենկատ մակերեսային ջրողողումներ:

Ինժեներական պաշտպանական միջոցառումները նպատակաուղղված են տվյալ տարածքի առանձին տեղամասերի, ինչպես նաև տարբեր կառուցվածքների վրա ազդող տարերային վտանգավոր երևույթների կանխարգելմանը, վերացմանը կամ դրանց նվազեցմանը, պաշտպանական առավել արդյունավետ և շահավետ միջոցառումների կիրառմամբ:

Անհրաժեշտ է նաև տվյալ տարածքի և օբյեկտների տեխնիկական վիճակի ռեժիմային հսկողություն (մոնիտորինգ)՝ ինժեներական միջոցառումների թե իրականացման, և թե դրանց շահագործման փուլերում:

Վտանգավոր երևույթներից տարածքին բնորոշ են՝

- մակերեսային ջրողողումներ, հատկապես սեզոնային առատ տեղումների փուլում,
- գերնստեցումային, ենթառողողումային հատկանիշներ դրսևորող գրունտների (սպիտակահողեր) առկայությամբ պայմանավորված քաղաքաշինական վտանգավոր երևույթները:

6.1 Մակերեսային հակաջրողողումային միջոցառումներ

Նախագծվող տարածքի տարբեր տեղամասերում մակերեսային ջրահոսքերը էլյուվիալ-դելյուվիալ ծագման գրունտների վրա առաջացնում են մակերեսային, երբեմն խորքային էրոզիոն երևույթներ:

Ջրողողման ենթակա տեղամասերում պաշտպանական միջոցառումները իրականացվում են կախված ջրողողման բնույթից՝ մշտական, սեզոնային, էպիզոդիկ, ինչպես նաև հասցվող վնասի (ռիսկի) մեծությունից:

- Ջրարբսող, ջրապահ և ջրաուղորդող կառուցվածքների իրականացում, մակերեսային ջրահոսքերի կարգավորման, դրանց արգելակման, հավաքման կամ ուղղորդված տեղափոխման նպատակով,
- Անհրաժեշտ է իրականացնել մշտական հսկողություն այդ տարածքների նկատմամբ հողօգտագործման և ագրոտեխնիկական գործընթացների օրինականության խստագույն պահպանման նպատակով:

6.2 Հականստվածքային միջոցառումներ

Գրունտների նստեցման հիմնական պատճառը կայանում է նրանում, որ ջրի ներգործության տակ քայքայվում են գրունտի կառուցվածքային կապերը, առաջանում է հոսունություն և կտրուկ խտացում սեփական կամ արտաքին ծանրության ճնշման տակ: Հիմնականում այդ խտացումը ավարտվում է մի քանի ռոպեում և այդ պատճառով գրունտի սեղմման, նստեցման պրոցեսն ունի «անկման» բնույթ:

Գերնստման հատկանիշներով գրունտները ջրհագեցումից (խոնավացումից) պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական հրապարակները հատակագծելիս բացառել տեղումնային և ձնհալքային ջրերի մուտքը ,
- նախատեսել և իրականացնել ջրամեկուսիչ ծածկոցներ ինչպես շենքերի շրջակայքում, այնպես էլ դրանց ներսում,

- հուսալիորեն մեկուսացնել ջրատար խողովակները,
- կառուցվածքների հիմնատակերը տեղադրել ավելի խորը, ոչ նստվածքային գրունտների վրա,
- կիրառվում է նաև նստվածքային գրունտների տափարակում կամ դրանց մասնակի փոխարինում այլ, ավելի կայուն, գրունտներով:
- համայնքի կոմունալ ծառայությունները պարտավոր են վերահսկել կառուցապատված տարածքները և անսարք ջրատար խողովակներով արտահոսքեր հայտնաբերելու դեպքում շտապ միջոցառումներ ձեռնարկեն:

6.3 Խախտված հողերի վերականգնում

Տարածքի առանձին տեղամասերում ռելիեֆը փոփոխված է՝ հիմնականում շինարարական գործընթացներով: Արդյունքում խախտվել են այդ միջավայրերի բնապահպանական պայմանները, մասնավորապես այդ տեղամասերի բուսա-բնահողային ծածկոցները:

Տեխնածին փոփոխված ռելիեֆով այդ տեղամասերում անհրաժեշտ է իրականացնել ռեկուլտիվացիոն համալիր (բազմակողմանի) աշխատանքներ՝ ինժեներա-շինարարական, ագլոմերատիվ, ինչպես նաև կանաչապատմանն ուղղված խախտված հողերի վերականգնմանը:

6.4 Հակասելավային, հակադեֆլյուկցիոն, հակաջրհեղեղային կառուցվածքներ և միջոցառումներ

Սելավներից, ջրհեղեղներից տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանության համար կիրառվում են հետևյալ կառուցվածքները և միջոցառումները.

- սելավաուղղիչ կառուցվածքներ՝ սելավային հոսքը դեպի սելավաթող կառուցվածքներ ուղղելու համար, ուղղիչ և պատող դամբեր, կարճապատնեշներ,

- սելավականխիչ կառուցվածքներ՝ սելավ առաջացնող հորդացումների կանխման համար,
- գոյություն ունեցող հակասելավային միջոցառումների և կառուցվածքների վերականգնում և նորոգում:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի զարգացման գլխավոր հատակագծի նկատմամբ ներկայացվող բնապահպանական պահաջների հիմքում ընկած է քաղաքի կայուն զարգացման ուղղվածությունն ի հաշիվ բնապահպանական և սոցիալտնտեսական կարիքների հավասարակշռվածության և բնապահպանական իրավիճակի նորմալացման:

Երևանի քաղաքաշինական զարգացման բնապահպանական պահանջների իրացման տեխնոլոգիական պայմանները ներառում են.

- էներգետիկայի օբյեկտների էներգաարդյունավետության բարձրացումը (ՋԷԿ, կենտրոնացված ջերմամատակարարման համակարգ),
- արդյունաբերության վերապրոֆիլավորում և արդիականացում, անցնելով սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների,
- ավտոմոբիլային պարկի զինումը արտանետված գազերի չեզոքացուցիչներով,
- ջրատար և կոյուղու ցանցերի վերակառուցումը և արդիականացումը,
- աերացիայի կայանի վերակառուցումը, հոսքաջրերի և աղտոտված մակերևութային ջրերի մաքրման ապահովումը կայանում այն աստիճանի, որը համապատասխանում է քաղաքի մակերևութային ջրավազանների նորմատիվային պահանջներին,
- քաղաքի կենցաղային թափոնների վերամշակում արդյունաբերական մեթոդներով, արդյունաբերական թափոնների երկրորդային օգտագործման և վերամշակման մակարդակի բարձրացում,
- քաղաքի տարածքի ճարտարագիտական պաշտպանությունը անբարենպաստ երկրաբանական պրոցեսներից:

Բնապահպանական պահաջների իրականացման քաղաքաշինական ուղղությունը նախատեսնում է.

- բնակչության առողջության անվտանգությանը սպառնացող բնապահպանական տեսակետից վտանգավոր գոտիների վերացումը,
- ուժեղ տեխնածին ծանրաբեռնվածության ենթարկվող տարածքների սանացիա (առողջացում) և վերականգնում,

- անշարժ աղտոտման աղբյուրներից օդի կայուն գերնորմատիվային աղտոտման գոտիների վերացումը, մայրուղիներին կից տարածքների օդի աղտոտվածության մեղմումը,
- բնակելի և հասարակական կառուցապատման տարածքում աղմկային անհարմարավետության գոտիների վերացումը,
- փողոցա-ճանապարհային ցանցի զարգացում և ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում, քաղաքի կենտրոնի բեռնաթափումը ավտոտրանսպորտից, հետիոտն փողոցների ձևավորում,
- կանաչ տնկարկների մակերեսների վերականգնում և ընդլայնում, ներառյալ մայրուղիների և բուֆերային գոտիների երկարությամբ հատուկ կանաչապատում,
- Գոտևորման նախագծով իրականացվելիք ծրագրերի համախառն փաստացի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա գնահատելու համար առաջարկվում է կազմել մշտադիտարկումների պլան և իրականացնել մշտադիտարկումներ:



Նկար 7.1. Գոտևորման նախագիծ. շրջակա միջավայրի կանխատեսվող վիճակի ուրվագծ

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Քաղաքային միջավայրի համալիր անտրոպոգեն տեխնածին բեռնվածությունը բաղկացած է գործոնային ցուցանիշներից միջավայրի հիմնական գործոնների քանակական բնութագրից, որոնք որոշիչ են մարդու օրգանիզմի վրա իրական բեռնվածությունում մթնոլորտային օդի և հողերի, աղմուկի մակարդակների, ջրի քիմիական և կենսաբանական աղտոտվածության ցուցանիշներ:

Հաշվի առնվող նշված գործոններից յուրաքանչյուրը քանակապես որոշվում է հիգիենիկ նորմատիվներին վերաբերվող մեկ ցուցանիշներով:

8.1. Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման վրա ազդող օդերևութաբանական կլիմայական պայմանների անալիզը

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ) բնորոշում է մթնոլորտում աղտոտող նյութերի կուտակման կամ ցրման գերակայությունը:

$$ՄՕՊ = \frac{Pա + Pմ}{Pտ + Pք}$$

Pա - քամու արագությունների կրկնողությունը (0-1,0մ/վրկ),

Pմ - մառախուղով օրերի կրկնողությունը %,

Pտ - 0,5մմ տեղումներով օրերի կրկնողությունը %,

Pք - 6մ/վրկ և ավելի քամու արագությունների կրկնողությունը %,

Նուբարաշեն համայնքի համար բնութագրերի արժեքները հետևյալն են՝

Pա = 64%, Pմ = 9.0 %, Pտ = 15.0% (55 օր), Pք = 5.6 % (20օր)

$$ՄՕՊ = \frac{64+9}{15+5.6} = 3.54$$

ՄՕՊ-ի ստացված արժեքի դեպքում աղտոտող նյութերի ցրման համար պայմանները գնահատվում են անբարենպաստ, իսկ մթնոլորտի ինքնամաքրման պոտենցիալը ցածր:

8.2 Նուբարաշեն համայնքի մթնոլորտի օդի աղտոտվածության գնահատումը

Նուբարաշեն համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ3), տրված «Հիդրոօդերեվութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից բերված աղյուսակում: Ֆոնային կոնցենտրացիաները բերված են «Ամփոփագիր, ՀՀ տարածքում 2021թ. Մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին»

Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները

Աղյուսակ 8.2.1

h/h	Աղտոտող նյութերի անվանումները	ՍԹԿառ.միան. մգ/մ³	Ֆոնային կոնցենտրաց. արժեքը, մգ/մ³
1 .	Ծծմբի երկօքսիդ	0.5	0.017
2 .	Ազոտի երկօքսիդ	0.2	0.027
3 .	Օզոն	0.16	0.005
4 .	Փոշի	0.5	0.172

Ինչպես երևում է աղյուսակից Նուբարաշեն համայնքի տարածքում քամու բոլոր ուղղությունների դեպքում վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմանային թույլատրելի նորմերը:

Մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատումը կատարվել է «Методические указания по санитарному надзору в районной планировке – М. Минздрав СССР 1990г. Համապատասխան:

Աղտոտվածության համալիր ցուցանիշը հաշվարկվում է

$P = \sqrt{\sum_{i=1}^{n} k \cdot \mathrm{i}^2}$ բանաձևով, որտեղ

K - նյութի նորմավորված III դասի բերման գործակիցն է

i - փաստացի խտությունների գերազանցումն է ՍԹԿ-ն :

Աղտոտվածության համալիր ցուցանիշի հաշվարկման համար ելակետային տվյալները բերված են աղյուսակ Ղ-ում:

Աղյուսակ 8.2.2

Նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Միջին օրական կոնցենտրացիաների արժեքները մգ/մ³	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան մգ/մ³ ՍԹԿ միջ. օր	Գերազանցում է օրական կոնցենտրացիան	Վտանգավորության III դասի բերման գործակիցը K3=K.nj իզոէֆեկտիվության գործակից
Ծծմբի երկօքսիդ	III	0.017	0.05	0.34	1
Ազոտի երկօքսիդ	II	0.027	0.04	0.675	1.3
Օզոն	I	0.005	0.03	0.167	2.3
Փոշի	III	0.172	0.15	1.14	1

Օդի աղտոտվածության համալիր ցուցանիշը P-ն կլինի:

$$P = \sqrt{(1*0.34)^2 + (1.3*0.675)^2 + (2.3*0.167)^2 + (1*0.14)^2} = 1.026$$

(նորմա 3):

Ստացված տվյալներից ելնելով, երբ n=5-9 և p=1.026 մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը գնահատվում է համեմատաբար բավարար:

Օդային միջավայրի աղտոտվածության համալիր գնահատականը արված է նաև ըստ հողմագծի աղտոտման աղբյուրից դեպի բնակելի գոտին փչող քամու արագության միջին տարեկան կրկնելիության (%) պայմաններում (P):

Մի հողմագծի քամիների ուղղության կրկնելիության տոկոսը քամիների շրջանային փնջագրի դեպքում Po:

Po=100:8=12.5%

Քամու արագության միջին տարեկան կրկնելիությունը (գերակայում են հարավային ուղղությամբ փչող քամիները) կազմում է 20 %:

Օդային միջավայրի աղտոտվածության գնահատականը տրված է

$$\mathbf{K}\text{մթն} = \left(\frac{\mathbf{C_1}}{\mathbf{N_1}\ \text{ՍԹԿ}\mathbf{C_1}} + \frac{\mathbf{C_2}}{\mathbf{N_2}\ \text{ՍԹԿ}\mathbf{C_2}} + \cdots + \frac{\mathbf{C_n}}{\mathbf{N_n}\ \text{ՍԹԿ}\mathbf{C_n}}\right)\mathbf{t}$$

Որտեղ՝

C_n - աղտոտվածության առանձին կոմպոնենտների միջին օրական կոնցենտրացիան է մգ/մ³

N_1 - գործակից, որի մեծությունը կախված է աղտոտող նյութերի վտանգավորության դասից

I դաս - 1; II դաս - 1,5; III դաս - 2; IV դաս - 4

t - C_1, C_2 … .C_n - աղտոտող նյութերի գումարային ազդեցության ցուցադրանքն է:

$t=P/P_0$ =20:12.5=1.6

ՍԹԿC_1, C_n - առանձին կոմպոնենտների միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է:

Նուբարաշեն համայնքի համար ստացվել են հետևյալ արդյունքները:

$$\mathbf{K}\text{մթն} = \left(\frac{\mathbf{0.017}}{\mathbf{2*0.05}} + \frac{\mathbf{0.027}}{\mathbf{1.5*0.04}} + \frac{\mathbf{0.005}}{\mathbf{1*0.03}} + \frac{\mathbf{0.172}}{\mathbf{2*0.15}}\right)\mathbf{1.6 = 2.176}$$

Հաշվարկից հետևում է, որ տարվա 20% ժամանակահատվածում 73 օր Նուբարաշեն համայնքում նկատվում է մթնոլորտային օդի աղտոտվածության զգալի բարձրացում 1.026-ից դառնալով 2.176:

Աղբյուրը՝ «Методические рекомендации. Унифицированные методы сбора данных, анализа и оценки заболеваемости населения с учетом комплексного действия факторов окружающей среды. Госкомитет санитарно-эпидемиологического надзора РФ. Москва» 1996г.

8.3 Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը

Մթնոլորտային օդի աղտոտվածության հետ կապված բնակչության առողջության պայմանական ռիսկը որոշվում է

R = V * K * M * B * C * 10-3 բանաձևով, որտեղ՝

R - ռիսկի չափը,

V - մեկ մարդու կողմից ներածված օդի քանակն է օրվա ընթացքում - 28,8մ³

M - մարդու մասսան է կգ -70,

K - մարդու օրգանիզմով տվյալ նյութի ներշնչման գործակիցն է (0,75),

B - ռիսկի կոնցենտրացիայի շեղման գործակից - 1,0 գ 10-3 (օր/մգ տվյալ նյութի համար),

C - տվյալ աղտոտող նյութի միջին տարեկան կոնցենտրացիան է օդում,

R_{NO2} = 28.8 * 0,75 * 70 * 0.017* 10-3 = 0,0257 -մինիմալ ռիսկ,

R_{SO2} = 28.8 * 0,75 * 70 * 0,027 * 10-3 = 0,0408 - մինիմալ ռիսկ,

$R_{օզոն}$ = 28.8 * 0,75 * 70 * 0,005 * 10-3 = 0,0075 - մինիմալ ռիսկ,

$R_{փոշի}$ = 28.8 * 0,75 * 70 * 0,172 * 10-3 = 0,260 - մինիմալ ռիսկ,

Այստեղից տրվում է եզրակացություն, արտանետումների նվազեցմանն ուղղված ինտենսիվ միջոցառումների անհրաժեշտություն չկա:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Նուբարաշեն վարչական շրջանի զարգացման միտումները բխում են մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնադրույթներից և ներկայացված են վարչական շրջանում առկա հիմնախնդիրներում:

Ստորև թվարկվում է 2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր՝ Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023թ. ծրագիրը հաստատելու մասին» N45-Ա որոշման համաձայն:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր՝

1. Նախատեսվում է իրականացնել փողոցների, մայթերի և միջբակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի մասնակի և կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ ներառյալ դիտահորերի և անձրևորսիչների նիշերի վերատեղադրում:
2. Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգում և վերանորոգում՝ ցինկապատ, պրոֆիլավորված հարթ թիթեղներով:
3. Կիրականացվեն վերելակային տնտեսության արդիականացմանն ուղղված աշխատանքներ: Նախատեսվում է վերելակների հիմնանորոգում և վերանորոգում, դետալների ձեռքբերում:
4. Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի բակերում թվով 16 հատ խաղահրապարակների կառուցում, կանաչապատ տարածքների ստեղծում, նոր զրուցարանների և նստարանների տեղադրում, ինչպես նաև հանգստի գոտիների բարեկարգման աշխատանքներ:
5. Նախատեսվում է վերանորոգել բազմաբնակարան շենքերի 75 շքամուտք, իրականացնել ներշենքային պայմանների պատշաճ տեսքի բերման,աստիճանների և բազրիքների վերանորոգման աշխատանքներ:
6. Նախատեսվում է արտաքին լուսավորության ցանցի ստեղծում բակային տարածքներում, զբոսայգիներում և նորաստեղծ թաղամասերում, ինչպես նաև

եղած և ստեղծվող արտաքին լուսավորության ցանցի արդիականացում՝ ժամանակակից լեդ լուսատուներով:

7. Նախատեսվում է հատուկ տարածքների հատկացում՝ շների զբոսանքի կազմակերպման համար:
8. Կիրականացվի կանաչ տարածքների ընդլայնում,պահպանում և խնամք, ծաղկապատում,ծառատունկի կազմակերպում:Պարբերաբար կիրականացվեն հուշարձանների պահպանման և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:
9. Նախատեսվում է կազմակերպել մշակութային և մարզական միջոցառումներ, երեխաների համար բակային ճամբարներ և տարաբնույթ այլ ծրագրեր:
10. Կիրականացվեն աշխատանքներ ուղղված սոցիալապես անապահով անձանց խնդիրների լուծման և աշխատանքի տեղավորման նպատակով:
11. 20-րդ և 21-րդ շենքերի աջակողմյան ձորակում նախատեսվում է իրականացնել աստիճանավանդակների, ճաղավանդակների և արտաքին լուսավորության անցկացման աշխատանքներ:
12. Նախատեսվում է իրականացնել Նուբարաշենի հիմնադրման հետ կապված ամենամյա միջոցառումների կազմակերպում:
13. Վարչական շրջանի տարածքում առկա բնակելի, բայց ոչ սեփականաշնորհված շինությունների օրինականացում /որի հիման վրա կավելանան վարչական շրջանի եկամուտները/:
14. Նախատեսվում է Նուբարաշեն 6-րդ փողոցի սպայական հանրակացարանի բնակիչներին բնակարաններով ապահովում /գտնվում են վթարային վիճակում և կարելի է ներդրումների արդյունքում նոր շենք կառուցել/:
15. Նախատեսվում է երեխաների համար ժամանցային և ուսուցողական կենտրոնների ստեղծում և զարգացում:
16. Նախատեսվում է մշակութային օջախների շենքային պայմանների բարելավվում և նոր ծրագրերի իրականացում:
17. Նախատեսվում է Նուբարաշենի պոլիկլինիկայի տեխնիկական սարքավորումների հագեցվածության և շենքային պայմանների բարելավվում:

18. Նախատեսվում է «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»-ի շենքային պայմանների բարելավում և աջակցություն:
19. Օժանդակել տրանսպորտային պայմանների բարելավմանը:
20. Կրթական օջախների շենքային և բակային տարածքների բարելավվում:
21. Նախկին «Տրիկոտաժի ֆաբրիկայի» վերագործարկման աջակցություն:
22. Նախատեսվում է փողոցի անվանակոչում Պողոս Նուբար Նուբարյանի անունով:

Գոտիավորման նախագծով նախատեսված նախագծային որոշումները ուղղված են բնակչության ապրելակերպի սանիտարա-հիգիենիկ պայմանների բարելավմանը, շրջակա բնական միջավայրի և բնական կամ մարդածին էկոհամակարգերի պահպանմանը և վերականգնմանը, տարածքի՝ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանմանը: Հատակագծային որոշումները հաշվի են առնում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և այլ գերատեսչությունների առաջարկները:

9.1 Մթնոլորտային օդը

Ինչպես երևում է «Երևանի գլխավոր հատակագծի Շրջակա միջավայրի արդի վիճակը» նկար 2.6.7-ից, Նուբարաշեն վարչական շրջանի ամբողջ տարածքը գտնվում է օդի թույլատրելի ախտոտվածության գոտում:

Համայնքի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները հեռանկարում կլինեն ավտոտրանսպորտը, Սովետաշենի աղբանոցը և քաղաքաշինական գործունեությունը (բնակարանաշինություն, ենթակառուցվածքներ, ճանապարհներ, շենք-շինություններ և այլն):

Հեռանկարում համայնքի բազմաբնակարանային շենքերի ջեռուցման համար կնախատեսվեն նոր , ժամանակակից կաթսաների տեղադրում:

Հեռանկարում ջերմային աղբյուրներից մթնոլորտ արտանետումները կաճեն, սակայն, ընդհանուր առմամբ, չեն գերազանցի ՍԹԱ նորմատիվները:

Նուբարաշեն վարչական շրջանում մասնավոր տները ջեռուցվում են անհատապես:

Արտանետումների նվազեցման հիմնական ուղղությունը ջերմամատակարարման համակարգերի էներգաարդյունավետության բարձրացումն է:

Համայնքի օդի փոշով աղտոտվածության մակարդակի նվազեցման միջոցառումները շինարարական աշխատանքներ իրականացնելիս թաց փոշեզերծման մեթոդների կիրառումն է, փողոցների կանոնավոր թաց սանիտարական մաքրումը, Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված կանաչ տարածքների վերականգնումը և ընդլայնումը:

Համայնքի մթնոլորտային օդի պահպանության հիմնական ուղղությունը՝ ավտոտրանսպորտից, արդյունաբերական օբյեկտներից արտանետումների նվազեցումն է, որը ապահովվելու է վերոհիշյալ միջոցառումների հաշվին:

Համայնքի արդյունաբերական հեռանկարային զարգացման անորոշության պատճառով դժվար է կանխատեսել արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների ծավալները: Համայնքի տարածքում գործող արդյունաբերական ձեռնարկությունների համար նախատեսված են էկոլոգիական սահմանափակումներ, որոնք պետք է պահպանվեն, անկախ արտադրությունների զարգացման ուղղությունից և տեմպերից:

– Շինարարական արդյունաբերական ձեռնարկություններում ուժեղացնել հսկողությունը փոշու կազմակերպված և անկազմակերպ արտանետումների վրա:
– Նոր արդյունաբերական տարածքների կենտրոնացումը գոյություն ունեցող արդյունաբերական շրջանների տարածքներում, ինչը կնպաստի նաև վնասակար թափոնների կենտրոնացված կառավարմանը և չեզոքացմանը:
– Արդյունաբերական շրջանի տարածքներում թույլատրել IV, V կարգի ձեռնարկությունների շահագործում: Ցածր կարգի ձեռնարկությունների դեպքում կատարել սանիտարա–պաշտպանիչ գոտու ճշգրտում:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված քաղաքի փողոցա–ճանապարհային ցանցի ուրվագծի իրականացումը, որով նախատեսվում է Նուբարաշեն համայնքի բեռնաթափումը տարանցիկ տրանսպորտից, տրանսպորտային ուղեբաժանքների և նոր բաշխիչ մայրուղիների և ստորգետնյա ավտոկանգնակների կառուցումը և այլն:

Համայնքի ճանապարհային ծածկի բարելավում, նոր մայրուղիների երկարացումը տեսակային կայուն կազմով պաշտպանիչ կանաչ շերտերի ստեղծում: Ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում և փողոցների թողունակության բարձրացում:

Հեռանկարում քաղաքային հասարակական ավտոտրանսպորտում էլեկտրաֆիկացված տրանսպորտի մասնաբաժնի ավելացում, ինչպես նաև ավտոմոբիլային պարկի աստիճանաբար նորացում: Ավտոմոբիլների զինումը արտանետվող գազերի չեզոքացուցիչներով:

Մթնոլորտային օդի պահպանության կազմակերպչական և վարչական բնույթի միջոցառումների թվին պետք է դասել համայնքի օդի աղտոտման աղբյուրների լրիվ հաշվառումը, նորմատիվների պահպանման հսկողության ուժեղացումը, մոնիտորինգի ցանցի ընդլայնումը:

Սավետաշենի աղբավայրի երկայնքով եռաշերտ ծառուղու ստեղծումը կնպաստի աղբավայրից դուրս եկող թունավոր գազերի, փոշու և տհաճ հոտի մեղմմանը, ինչպես նաև վիզուալ ազդեցության կրճատմանը:

Նշված միջոցառումները համահունչ են ՀՀ Կառավարության «Տրանսպորտային միջոցների վնասակար նյութերի արտանետման նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասինե 17.09.2006թ. N 1033-Ն որոշմանը:

9.2 Աղմուկի մակարդակը

Հեռանկարում Նուբարաշեն համայնքի աղմկային ֆոնը դարձյալ հիմնականում կձևավորվի քաղաքաշինական գործունեության (բնակարանաշինություն, ենթակառուցվածքներ, ճանապարհներ, շենք-

շինություններ և այլն), հրաձգարանի և ավելացող ավտոտրանսպորտի հաշվին: Հաշվի առնելով, որ տրանսպորտային աղմուկի գերնորմատիվային մակարդակը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների աճի տեմպերի գերազանցմամբ, փողոցա–ճանապարհային ցանցի զարգացման տեմպերով, աղմուկի մակարդակի իջեցմանը կնպաստի Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված փողոցա–ճանապարհային ուրվագծի իրականացումը:

Փողոցա-ճանապարհային ցանցի զարգացման ուրվագծի իրականացումից բացի տրանսպորտային աղմուկի նվազեցմանը կնպաստեն հետևյալ միջոցառումները՝

– համայնքի ճանապարհային ծածկի բարելավում,
– նոր մայրուղիների երկարությամբ կանաչ պաշտպանչ շերտերի ստեղծում;
– ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում,
– փողոցների թողունակության բարձրացում;
– տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկողության ուժեղացում:

Աղմկային անհարամարվետությունը նվազագույնի հասցնելուն մեծապես կնպաստի աղմուկապաշտպան պատուհանների և աղմուկամեկուսիչ ապակեպատման լայն կիրառությունը:

Հրաձգարանի երկայնքով եռաշերտ ծառուղու ստեղծում, որը կնպաստի հրաձգարանից դուրս եկող աղմուկի խլացմանը:

Քաղաքաշինական աշխատանքների ժամանակ շինարարական աշխատանքները իրականացնել համաձայն ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի համաձայն:

Աղմուկից պաշտպանվելու նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա համայնքի հիմնական մայրուղիներում աղմուկի մակարդակը նվազեցնել և բնակելի կառուցապատման մեծ մասում ապահովել աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակ:

9.3 Հողերի բնութագիրը

Ըստ «Գոտևորման նախագծի շրջակա միջավայրի կանխատեսվող վիճակի ուրվագծի» համայնքի կենտրոնական մասում առկա է «Ծանր մետաղներով հողերի միջին աղտոտվածության տարածքներ /ԱԳԾ 16-32/» (տեսա նկար 7.1):

Ծանր մետաղները, որպես կանոն, կուտակվում են հիմնականում հողի մակերեսային շերտում 0–10 (20) սմ, որտեղ դրանք գտնվում են ինչպես փոխանակային իոնների ձևով, այնպես էլ ոչ փոխանակային՝ հողի կլանող կոմպլեքսի կողմից ամուր կապված: Ջրալույծ (շարժուն) ձևերի պարունակությունը սովորաբար մեծ չէ, սակայն հողի ուժեղ աղտոտվածության դեպքում ծանր մետաղների շարժուն ձևերի բացարձակ քանակությունը ինքնաբերաբար դառնում է էկոլոգիական վտանգավոր գործոն:

Ծանր մետաղները կուտակվելով հողում խախտում են նրա ֆիզիկաքիմիական հավասարակշռությունը ու պատճառ դառնում մի շարք բացասական փոփոխությունների՝ փոխվում է pH-ի մեծությունը, քայքայվում է հողի կլանող կոմպլեքսը, խախտվում են միկրոկենսաբանական պրոցեսները, վատթարանում է ջրաօդային ռեժիմը, նվազում է հումուսի պարունակությունը և արդյունքում հողը կորցնում է իր բերրիությունը:

Հողում ծանր մետաղների խտության մեծացմանը զուգընթաց մշակաբույսերում դրանց պարունակությունը նույնպես ավելանում է: Այսինքն, աղտոտված հողերում աճեցրած մշակաբույսերը պարունակում են համեմատաբար մեծ քանակությամբ ծանր մետաղներ, այլ կերպ ասած հողում և բույսերում ծանր մետաղների պարունակության միջև առկա է դրական կորելյացիոն կապ:

Հայաստանում, այդ թվում նաև Նուբարաշեն վարչական շրջանում վերջին 15 տարիների ընթացքում կտրկուկ նվազել է ծանր մետաղների ներհոսքը շրջակա միջավայր և նրանց հետագա կուտակումը համայնքի հողածածկույթի բաց հատվածներում: Այդ նվազումը հինականում պայմանավորված է ավտոտրանսպորտում ոչ էթիլացված բենզինի և սեղմված բնական գազի օգտագործմամբ, մազութի օգտագործման դադարեցմամբ:

Հեռանկարում համայնքում չի սպասվում ծանր մետաղների նոր աղբյուրների գոյությունը: Հողերի ինքնամաքրման ունակությունը և առավել աղտոտված հատվածների առողջացման իրականացումը (ագրոտեխնիկական միջոցառումներ, կանաչապատում և այլն) կհանգեցնի համայնքի փոքր հատվածում հողերի աղտոտվածության նվազման: Տարածքը կդիտարկվի աղտոտվածության թույլ գոտի:

9.4 Մակերևույթային ջրեր.

Նուբարաշեն վարչական շրջանի ջրօգտագործման ելքերի հաշվարկը բերված է աղյուսակ 9.4.1-ում:

Հեռանկարում բնակչության և միջին օրական ջրապահանջի աճի նախատեսված 150լ/օր-մարդ նորմայի դեպքում, կոյուղու համակարգի ընդլայնման և արդյունաբերական օբյեկտների հզորությունների աճի հետ մեկտեղ կավելանա նաև Երևան քաղաքի կոյուղու կոլեկտոր, այնուհետև Հրազդան գետի ջրհավաք ավազան տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի քանակը:

Աղյուսակ 9.4.1

Ջրօգտագործման ելքերի հաշվարկ					
Համայնքի անվանումը	Ջրօգտագործումը հաշվարկային 2020թ.				
	բնակչ. թվաք. առ 01.01.2020թ.	ընդհանուր ջրօգտագ. մ3/վարկ	ջրօգտ. բնակչ. կողմից 150լ/մարդ օր	ջրօգտ. արդյուն. կողմից	հոսկաոր 20%
Նուբարաշեն	9.9	0.33	0.016	0.01	0.007

Բնապահպանական միջոցառումների առկա վիճակի դեպքում սպասվում է Հրազդան գետ թափվող աղտոտող նյութերի քանակների աճ:

Նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի բարելավմանը:

Բոլոր արդյունաբերական օբյեկտներում նախնական մաքրման կայանքների պարտադիր ապահովումը և կոյուղի թափվող հոսքաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների պահպանումը:

Հրազդան գետի ջրի նորմատիվ վիճակը հնարավոր է ապահովել դիտարկելով գետի աղտոտման կանխումը ջրավազանի մակարդակով: Մինչև Երևան քաղաքի սահմանագիծ մտնելը Հրազդան գետի ջրապաշտպան միջոցառումները՝ մասնավորապես Գագարինի և Քաղսիի մաքրման կայանների վերակառուցումը, գետամերձ բնակավայրերի կեղտաջրերի կոյուղացումը և այլն, նախատեսված են Երևանի ագլոմերացիայի տարածքային զարգացման հատակագծում:

Նուբարաշեն համայնքի սահմաններում իրականացնել ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման աշխատանքներ:

Նուբարաշեն վարչական շրջանի սահմաններում թռչնաբուծական և խոզաբուծական ֆերմաներից առաջացող կեղտաջրերի ելքերը հաշվառել, անհրաժեշտության դեպքում պարտադրել, որպեսզի տեղադրվի մաքրման կայաններ:

Ջրապաշտպան գործունեության կառավարման արդյունավետության և ջրային օբյեկտների վիճակի ստույգ գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ կազմակերպչական միջոցառումները՝

- հաշվառման վերցնել աղտոտման բոլոր աղբյուրները,
- հաշվառել կեղտաջրերի քանակը և կազմը,
- ընդլայնել հսկվող աղտոտիչ նյութերի քանակը,
- սահմանել պատշաճ հսկողություն:

9.5 Թափոնների կառավարում

Ըստ Կայուն զարգացման նպատակների փորձագետների փոխանակման հայ-շվեդական և ՀՀ կառավարության «Թափոնների կառավարումը Հայաստանում»

2020թ.-ի զեկույցի՝ կենցաղային թափոնների գոյացումը մեկ շնչի հաշվարկով կազմում է 237կգ/տարի:

Հեռանկարում կանխատեսվում է, որ Նուբարաշեն համայնքի բնակչության թիվը կհասնի 12500 մարդ, ինչը նշանակում է, որ առկա թափոնների ծավալը կավելանա 616.2 տ/տարի-ով:

Համայնքի արդյունաբերական հեռանկարային զարգացման անորոշության պատճառով դժվար է կանխատեսել արդյունաբերական թափոնների ծավալի փոփոխությունը:

Ինչպես ներկայում, այնպես էլ հեռանկարում, Երևան քաղաքի համար առաջնային է մնում աղբահանության և աղբամշակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը:

Թափոնների կառավարման միջազգային չափանիշերին համապատասխան (օրինակ՝ անվտանգության և հիգիենայի առումով) համակարգ ստեղծելու նպատակով, Երևանի քաղաքապետարանը որոշում կայացրեց Սովետաշենի գործող աղբավայրի կողքին նոր սանիտարական աղբավայր կառուցելու մասին (հիմք ընդունելով Տեխնիկական իրականացման հնարավորությունների ուսումնասիրության արդյունքները):

Հայաստանի Հանրապետությունը ընդունել է թափոնների կառավարման ազգային նոր ռազմավարություն, որը հիմք կծառայի կոշտ թափոնների կառավարման համակարգի համար՝ ամբողջ երկրում: Ազգային շրջանակային ծրագիրը հաստատում է, որ այս նախագիծը համահունչ է ռազմավարության դրույթների պահանջներին:

19-ը մայիսի, 2015թ-ին Երևանի քաղաքապետարանի խնդրանքով, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) իրականացրել է «Երևանում կոշտ թափոնների կառավարման նախագծի» շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում, որտեղ մանրակրկիտ նկարագրվում է Նուբարաշենի (նախկին Սովետաշենի) աղբավայրի արդի վիճակը, առկա խնդիրները, աղբավայրի փակման և հարևանությամբ նոր, սանիտարական աղբավայր կառուցելու հնարավորությունները:

Թափոնների կառավարման ազգային ռազմավարության մշակման ընթացքում հստակեցվել է, որ տեղական մակարդակով աղբահավաքումը, կայաններ տեղափոխումը և ԵՄ նախագծային և բնապահպանական ստանդարտներին և տեղանքի աշխարհագրական առանձնահատկություններին համապատասխան ռեգիոնալ սանիտարական աղբավայրերի առկայությունը կլինի լավագույն տարբերակը:

9.6 Կանաչապատման համակարգը

Հեռանկարում, Նուբարաշեն համայնքի բնակչության կանխատեսվող թվաքանակը կազմում է 12.5 հազար մարդ:

Նուբարաշեն համայնքի համար տարբեր ֆունկցիոնալ նշանակության կանաչ տնկարկների բաշխումը և բնակչության ապահովվածությունը գոտևորման նախագծով առաջարկվող կանաչ մակերեսները փոփոխությունից հետո բերվում են աղյուսակ 19-ում:

Գոտևորման Նախագծով առաջարկվում է Բուֆեռային գոտի 2-ի կազմակերպում (արդյունաբերական, կոմունալ օբյեկտների, գերեզմանոցների շուրջ սանիտարապաշտպանիչ կանաչ գոտի), ինչի արդյունքում համայնքի կանաչապատ տարածքները կավելանան 80.67 հա-ով:

Գոտևորման Նախագծով առաջարկվում է նաև ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ավելացում 2.7 հա-ից հասցնելով մինչև 199.22 հա-ի, ինչպես նաև բազմամյա տնկարկների մակերեսները 205.2հա-ից մինչև 212.31հա:

Գոտևորման նախագծով առաջարկվող տարբեր ֆունկցիոնալ նշանակության կանաչ տնկարկների մակերեսները
(հա և բնակչության ապահովվածությունը (մ²/մարդ)

Աղյուսակ 9.6.1

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ²/մարդ
1. Ընդհանուր օգտագործման	199.22	159.37
2. Սահմանափակ օգտագործման	124.7	99.76
3. բազմամյա տնկարկներ (պտղատու այգիներ)	212.31	169.84
4. բուֆեռային գոտի 2	80.67	64.53
Ընդամենը	579.1	493.81

Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որը իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները՝

- ✓ բնակավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում,
- ✓ վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում հատուկ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը, խնամքը և պահպանությունը,
- ✓ տնկարանային և ջերմատնային տնտեսությունների ստեղծում,
- ✓ անխափան ոռոգում երաշխավորող ոռոգման ցանցի կառուցում,
- ✓ ժամանակակից տեխնոլոգիաների և գիտության նվաճումների ներդրում, տնկանյութի տեսակների հիմնավորված ընտրություն,
- ✓ ընդհանուր օգտագործման կանաչապատմանն են վերագրվում՝ համայնքային զբոսայգիներն ու պուրակները, որոնք նախատեսված են համայնքի բնակչության կարճատև հանգստի կազմակերպման համար:
- ✓ նոր կանաչապատ տարածքների ստեղծում՝ համապատասխան ծառատեսակների օգտագործմամբ,



Նկար 9.6.1. Գոտևորման նախագիծ. Կանաչապատման ուրվագծ

Կանաչ ծածկույթ

Տարածքների կանաչապատման համար պետք է օգտագործել ստորև բերվող ծառերի, թփերի և փաթաթվողների (լիանաներ) տեսակները.

Ասեղնատերևավործառեր

1. Գիհի բազմապտուղ - Juniperus po/icarpos C. Koch
2. Գիհի վիրգինյան - Juniperus virginiana L
3. Գիհի սրաթեփուկ - Juniperus foetidissima Wild
4. Գիհի սովորական - Juniperus communis L.
5. Եղևնի կեռիկավոր - Picea pungens Engl.
6. Եղևնի կեռիկավոր արծաթափայլ - Picea pungens V. g/auca Be/ssn.
7. Կենսածառ արևելյան - Biota orienta/is End/.
8. Սոճի ղրիմյան - Pinus pa/iasiana Lamb.
9. Սոճի Սոսնովսկու - Pinus sosnovskyi Nakai
10. Սոճի Բանկսի - Pinus banksiana Lamb
11. Սոճի դեղին - Pinus ponderosa Dougi.

Ասեղնատերևավորթփեր

12. Գիհի կազակական - Juniperus sabina L.
13. Գիհի ցածրաճ - Juniperus depressa Stev.
14. Թույա արևմտյան - Thuja occidenta/is L.

Լայնատերևավործառեր

15. Արոսի սովորական - Sorbus aucuparia L
16. Բալենի սովորական - Cerasus vulgaris Mill
17. Բարդի անտառային - Popu/us tremu/a L.
18. Բարդի Բոլլեի - Popu/us bolleana Lauche
19. Բարդի (Սիմոնի) չինական - Populus simonii Carr.
20. Բոխի արևելյան - Carpinus orientalis Mill.
21. Ընկուզենի սովորական* - Jug/ans regia L.
22. Թեղի էլիպսատերև* - U/mus effiptica C. Koch.
23. Թեղի տերևաշատ* - U/mus fo/iaceae Gi/ib.

24. Թեղի փետրաճյուղավոր* - U/mus pinnato - ramosa Dieck
25. Թթենի սպիտակ - Morus a/ba L.
26. Թթենի սպիտակ, լացող* - Morus a/ba f. pendu/a Dipp.
27. Թխկի դաշտային* - Acer campestre L.
28. Թխկի սրատերև* - A cer p/atanoides
29. Կատալպա սովորական* - Cata/pa bignonioides Wa/t.
30. Կատալպա օվալատերև* - Cata/pa ovata G. Don
31. Խնձորենի արևելյան - Ma/us arienta/is Ug/.
32. Խնձորենի հատապտղային - Ma/us fioribunda Sieb.
33. Ծիրանենի սովորական - Armeniaca vu/garis Lam.
34. Կաղնի արևելյան - Quercus macranthera Mey.
35. Կաղնի երկարակոթուն* - Quercus /ongipes Stev.
36. Կաղնի ամառային - Quercus robur L
37. Կաղնի կարմիր* - Quercus rubra L.
38. Կաղնի շագանակատերև* - Quercus castaneifo/ia C. A. Mey.
39. Սոսի արևելյան* - Platan us orienta/is L.
40. Սոսի թխկիատերև* - P/atanus acerifo/ia Wiiid.
41. Սերկևիլենի սովորական - Cydonia ob/onga Mi//.
42. Տանձենի կովկասյան - Pyrus caucasica Fed.
43. Տանձենի ուռատերև - Pyrus sa/icifo/ia Pa//.
44. Տխլենի սովորական - Cory/us ave//ana L.
45. Ուռենի բարձր - Sa/ix exce/sa Gme/
46. Ուռենի սպիտակ - Sa/ix a/be L.
47. Ուռենի սպիտակ, լացող* - Sa/ix a/ba v. pendu/a hort.
48. Ուռենի զամբյուղի - Sa/ix vimina/is L.
49. Կեռասենի - Cerasus aviun Moench.
50. Հացենի սովորական* - Fraxinus exce/sior L.
51. Հացենի սրապտուղ* - Fraxinus oxicarpa
52. Հացենի պենսիլվանյան* - Fraxinus pennsy/vanica March.

53. Հացենի նշտարաձև* - Fraxinus /anceo/ata Borkh.

54. Հացենի ամերիկյան* - Fraxinus americana L.

55. Նշենի սովորական - Amygda/us communis L.

56. Նշենի ֆենցլի - Amygda/us fenz/iana Lipsky.

57. Նռնենի - Punica granatum L.

58. Շլորենի - Prunus divaricata Ldb.

59. Ռոբինիա կեղծակացիա - Robinia pseudoacacia L.

60. Փռշնի մերկ - Ceitis glabrata Stev.

61. Չիչխան դժնիկանման - Hippophae rhamnoides L.

Լայնատերևավորթփեր

62. Ամորֆա թփային - Amorpha fruticosa L.

63. Ասպիրակ արևքուրիկատերև - Spiraea hypericifolia L.

64. Ասպիրակ վանհուտտի - Spiraea vanhouttei Zbl.

65. Ասպիրակ ճապոնական - Spiraea japonica L.

66. Արոսի երկակի - Sorbus dualis Zinserl.

67. Բռնչի սովորական - Viburnum opulus

68. Գերիմաստի - Viburnum lantana L.

69. Դժնիկ լուծողական - Rhamnus cathartica L.

70. Դրախտածառ - Cotinus coggygria Scop.

71. Եղրևանի սովորական - Syringa vulgaris

72. Զկեռենի սովորական - Mesplus germanica L.

73. Թխենի սովորական - Padus arcemosa Gilib.

74. Իլենի եվրոպական - Euonymus europaea L.

75. Կելրեյտերիա հուրանավոր - Koclreuteria paniculata haxm.

76. Կիպրոս սովորական - Ligustrum vulgare L.

77. Ծորենի արևելյան - Berberis vulgaris L.

78. Ց.Խենոմելես ճապոնական - Chaenome/es japonica (Thunb.) Lind/.

79. Ֆորսիցիա օվալատերև - Forsyth ra ovata Nakai

80. Ֆորսիցիա միջանկյալ - Forsythra intermedia Zab.

81. Հաղարջենի Բիբերշտեյնի - Ribes bibersteinii Bed.
82. Ճապկի արնակարմիր - Corn us sanguinea L.
83. Ճապկի հարավային - Corn us austra/is C. A. Mey.
84. Սզնի խոշորափուշ - Crataegus macrocantha Lodd.
85. Սզնի արևելյան - Crataegus orienta/is Pall.
86. Տոսախ մշտադալար - Buxus sempervirens L.
87. Ցախակեռաս կովկասյան - Lonicera caucasica Pall.
88. Ց.Ցախակեռաս թաթարական - Lonicera tatarica L.
89. Ցախակեռաս Մաակի - Lonicera maakii Maxim
90. Բշտիկատերև բռնչիատերև - Physocarpus opu/ifo/ia L.
91. Մասրենի սովորական - Rosa canina L.
92. Վարդ առատափուշ - Rosa spinosissima L.
93. Վարդ վահանակիր - Rosa corymbifera Borkh.
94. Չմենի փայլուն - Cotoneaster /ucida L.
95. Չմենի հորիզոնական - Cotoneaster horironta/is Dcne.

Փաթաթվողներ (լիանաներ)

96. Խաղող ամուրյան ** - Vitis amurensis Rupr
97. Խաղող կուլտուրական** - Vitis vinifere L.
98. Վիստերիա չինական** - Wisteria sinensis Sweet.
99. Կուսախաղող հնգատերև** - Parthenocissus quinquefolia (L.)
100. Մամրիչ արևելյան** - Clematis oriental is L.
101. Վարդ մանրածաղիկ** - Rosa micrentha Smith.

* Անտառպուրակների, սանիտարական գոտիների հիմնական անտառ կազմող ծառատեսակները:

** Ուղղաձիգ կանաչապատման համար:

(Ընդամենը 101 տեսակ):

2.10 Բուսական և կենդանական աշխարհի պահպանություն

Համայնքի տարածքում և դրա շրջակայքում հատուկ պաշտպանվող բուսատեսակներ չկան: Նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում:

Համայնքի լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսատեսակների պահպանության համար, շինարարության համար հատկացված տարածքներում դրանց առկայության պարագայում, սերմնադրման ժամանակահատվածում անհրաժեշտ է հավաքել սերմերը և օգտագործել գարնան սերմնացանի համար: Գլխավոր հատակագծում տեղ գտած շինարարական աշխատանքների ժամանակ ծառահատումներ չեն իրականացվելու:

Կենդանական աշխարհին, հատկապես անողնաշարավորների վրա ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ, որտեղ կարող են գտնվել դրանց բները: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բնադրավայրերիի և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով հողային աշխատանքները և ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Նախատեղվող շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելք հանդիսանալ կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիային:

Քաղաքի կենսաբազմազանության պահպանման համար առաջարկվում է.

- ✓ Վերականգնել 1990-ական թվականներին հատված քաղաքի կանաչապատ տարածքները՝ օգտագործելով հիմնականում տեղական ծառատեսակներն ու թփերը,

- ✓ վերականգնել Երևանի բուսաբանական այգու 1990-ական թվականներին ոչնչացված կանաչապատ տարածքները, ոռոգման համակարգը, իրականացնել ծառատունկ և պահպանված բուսականության խնամքը,
- ✓ առանձնացնել որպես բնության հատուկ պահպանվող տարածքներ քաղաքի սահմանագծում պահպանված բնական էկոհամակարգերի տեղամասերը՝ Հրազդան գետի կիրճ, Կարմիր կավերի անապատի տեղամասեր, Վերին Ջրաշենի, Երևան-Շորբուլախի և Նուբարաշենի շրջակայքում, կիսաանապատային տեղամասեր Կարմիր Բլուր շրջակայքում, Երևանի հյուսիսային շրջանների տափաստանային տեղամասեր,
- ✓ նախատեսել ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված մի շարք հազվադեպ և անհետացող տեսակների ապաստան հանդիսացող քարանձավների պահպանությունը,
- ✓ կազմակերպել կենսաբազմաբանության մոնիտորինգ (դիտանց) ինչպես բնական տարածքներում, այնպես էլ արհեստական տնկարկներում,
- ✓ նախատեսել հիվանդությունների տարածողների (առնետներ, արյունածուծ միջատներ) դեմ պայքարի միջոցներ, հաշվի առնելով սակայն, որ նման միջոցառումները պետք է անցկացվեն ընդհանուր կենսաբազմազանությանը նվազագույն վնաս հասցնելու պայմանով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ Նուբարաշեն տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, զարգացման հետ զուգահեռ կնկատվի օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում, սակայն նախատեսված բնապահպանական միջոցառումների ներդրման արդյունքում (ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկում, կեղտաջրերի մաքրման կայանների շահագործում, թափոնների կառավարում և այլն) Համայնքի տարածքը կմնա թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ✓ Руководство по составлению раздела «Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами» в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. М., 1982г.
- ✓ Рекомендации по охране окружающей среды в районной планировке. М 1986г.
- ✓ Շինարարական Կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011, Երևան, 2013 թ. :
- ✓ Рекомендации по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповых систем населенных мест, М. ЦХИИП, Градостроительство, 1980г.
- ✓ «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008թ հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ✓ Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ автомобильным транспортом. М., Гидрометеоиздат, 1986г.
- ✓ Методические указания по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ автомобильным транспортом. М., Гидрометеоиздат, 1983г.
- ✓ Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Л., Гидрометеоиздат,1986г.
- ✓ ՀՀ կառավարության որոշում՝ 25 հունվարի 2005 թվականի N-91-Ն. Տնտեսական գործնեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին:
- ✓ СНиП II-12-77. Защита от шума. М., 1978г.
- ✓ Г.Л. Осипов и др. “Градостроительные меры борьбы с шумом”, Стройиздат 1975г.
- ✓ ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»: